

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ
ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԴԱՇՏԻ ԵՒ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.
«ՆԻԿՈՒՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ»
ԳՈՐԾՈՎ ՄԻԵԴ ՎՃՈՒ ԿԱՏԱՐՈՒՄ



Կազմեց Եվրոպայի խորհրդի ազգային
խորհրդատու Մերգեյ Դազինյանը

2024 թվականի
հունիս

**ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ
ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԴԱՇՏԻ ԵՒ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.
«ՆԻԿՈԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ»
ԳՈՐԾՈՎ ՄԻԵԴ ՎՃՌԻ ԿԱՏԱՐՈՒՄ**

Պատրաստված է Եվրոպայի խորհրդի փորձագետ
Սերգեյ Ղազինյանի կողմից
Եվրոպայի խորհրդի՝ «Մարդու իրավունքները կենսաբժշկության մեջ»
ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Եվրոպայի խորհրդի՝
Հայաստանի համար 2023-2026թթ. գործողությունների ծրագրի ներքո

2024 թվականի հունիս

Եվրոպայի խորհուրդ

Analysis of domestic legal framework and practice on the restriction of legal capacity of persons with mental health issues: Execution of ECtHR judgement Nikolyan vs Armenia

Սույն փաստաթուղթը պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետը:

Քաղվածքների վերարտադրումը (մինչև 500 բառ) թույլատրելի է՝ բացառությամբ կոմերցիոն նպատակով, քանի դեռ պահպանվում է տեքստի ամբողջականությունը, հատվածը չի օգտագործվում համատեքստից դուրս, չի տրամադրում թերի տեղեկություն կամ այլ կերպ չի ապակողմնորոշում ընթերցողին տեքստի բնույթի, շրջանակի կամ բովանդակության առումով: Աղբյուրի տեքստը միշտ պետք է վկայակոչվի հետևյալ կերպ՝ «© Եվրոպայի խորհուրդ, հրապարակման տարեթիվ»:

Սույն փաստաթղթի ամբողջական կամ դրա մի մասի վերարտադրման կամ թարգմանության հետ կապված բոլոր հարցումները պետք է ուղղվեն Հաղորդակցության տնօրինությանը (F-67075 F67075 Ստրասբուրգ, Սեդեքս):

Այս փաստաթղթի հետ կապված ցանկացած այլ նամակագրություն պետք է ուղղվի Մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինությանը: Էլ. փոստ՝ [DGI-CDBIO@coe.int](mailto: DGI-CDBIO@coe.int)

Շապիկի լուսանկարը՝ Shutterstock:

Այս հրապարակումը չի խմբագրվել Փաստաթղթերի և հրատարակչության տնօրինության (SPDP)-ի խմբագրական բաժնի կողմից՝ տպագրական և քերականական սխալները շտկելու համար:

© Եվրոպայի խորհուրդ, 2024 թվականի հունիս

_Toc174110185	Հապավումների ցանկ	5
	Ներածություն	6
I.	Վերլուծության ընդհանուր նկարագիրը եւ շրջանակը.....	8
II.	Գործունակության անհատական սահմանափակումների սահմանում.....	16
III.	Գործունակություն գնահատումը եւ փորձագետի կողմից «հնարավորինս վերջերս տրամադրված» եզրակացությունը.....	32
IV.	Գործունակության սահմանափակման վերանայումը.....	38
V.	Խնամակալության եւ հոգաբարձության համակարգը.....	48

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՔՕ	Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք
ՆԿ	Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ՔԴՕ	Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ԱՍՀՆ	Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

Գործունակությունն իրավական համակարգի անկյունաքարերից է, որով որոշվում է անհատի՝ իրավունքներն իրացնելու, որոշումներ կայացնելու եւ դատական գործընթացներին ինքնուրույն մասնակցելու կարողությունը: Այնուամենայնիվ, այս հիմնարար սկզբունքը բախվում է խնդիրների, երբ հարցը վերաբերում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց: Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ինքնավարության երաշխավորման եւ պաշտպանության ապահովման միջեւ հավասարակշռություն պահպանելու համար անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել իրավական կարգավորումները, նախադեպերը եւ էթիկական նկատառումները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) ուսումնասիրել է այս հարցի տարբեր հայեցակետեր՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) անձնական եւ ընտանեկան կյանքի, բնակարանի եւ նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքի մասին 8-րդ հոդվածի շրջանակում: Ի թիվս այլ գործերի՝ «Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի» գործն իր ուրույն դերն ունի: Դրա շրջանակում ոչ միայն բացահայտվել են Հայաստանում առկա ընդհանուր բնույթի հիմնախնդիրները, այլեւ հետագայում զարգացել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը¹:

Այս իրավական վերլուծության նպատակն է «Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի» գործով ՄԻԵԴ-ի վճռի կատարման շրջանակում ուսումնասիրել Հայաստանի իրավական դաշտը եւ պրակտիկան՝ կապված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործունակության սահմանափակման հետ: Այս համատեքստում զեկույցն անդրադառնում է չորս հիմնական հայեցակետերի՝ գործունակության սահմանափակման տարբեր աստիճանների սահմանմանը, փորձագետների «վերջին» եւ մանրամասն փորձաքննության զեկույցներին, գործունակության վերանայմանը եւ խնամակալության համակարգի արդյունավետությանը:

Կարևոր է նշել, որ այս զեկույցում ներկայացված առաջարկությունները կարելի է բաժանել երեք հիմնական տեսակի՝ օրենսդրական եւ ինստիտուցիոնալ

¹ Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի [*Nikolyan v. Armenia*] (Գանգատ թիվ 74438/14, 2019 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/eng/?i=001-196149>.

փոփոխություններ, որոնք անմիջականորեն առնչվում են «Նիկոլյանս ընդդեմ Հայաստանի» գործով վճռի կատարմանը, այդ փոփոխությունները կատարելու գործնական քայլերի վերաբերյալ առաջարկություններ եւ ոլորտի հետագա բարելավման մասով առաջարկներ: Յուրաքանչյուր բաժնի վերջում առաջարկությունների հետ մեկտեղ նշումներ են արվում «Նիկոլյանս ընդդեմ Հայաստանի» գործով վճռի կատարման հետ դրանց առնչության մասին:

Փաստաթղթի մշակման համատեքստում վերլուծության են ենթարկվել նաեւ վարչական դատավարությանը եւ քաղաքացիական դատավարությանն առնչվող իրավական կարգավորումները, ինչպես նաեւ փաստաբանությանը վերաբերող այլ իրավական ակտեր: Հետազոտության շրջանակում անդրադարձ է կատարվում նաեւ գործնական մարտահրավերներին: Ուսումնասիրությունների շրջանակը ներառում է ոչ միայն ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը եւ ներպետական իրավական դաշտը, այլ նաեւ ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի նախադեպային որոշումները, ինչպես նաեւ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի զեկույցները:

Այս զեկույցը մշակելիս հաշվի են առնվել 2022 թվականի դեկտեմբերի 9-ից 10-ը «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում հոգեկան առողջության խնդիրներ չունեցող անձանց ֆունկցիոնալ կարողությունների հետ կապված հարցերի» եւ 2024 թվականի փետրվարի 5-ին տեղի ունեցած «Հոգեկան առողջության խնդիրների հետեւանքով անգործունակ ճանաչված անձանց իրավունքների» վերաբերյալ փորձագիտական քննարկումների արդյունքները:

Հետագա վերլուծության համար հիմք է ծառայել «Աջակցություն Հայաստանի կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով կայացված վճիռների կատարմանը» ծրագրի շրջանակում պատրաստված «Անգործունակ անձանց համար արդարադատության մատչելիության եւ ազգային դատարանների որոշումների չկատարման կամ ուշ կատարման մասին» զեկույցը:

Չեկույցում իրավական վերլուծությունից հետո ներկայացվում են օրենսդրական փոփոխությունների եւ պրակտիկայի բարելավման մասով առաջարկություններ: Խորհրդատուն ցանկանում է շնորհակալություն հայտնել Ծրագրի թիմին եւ հետազոտությանը մասնակցություն ունեցած բոլոր շահագրգիռ կողմերին արդյունավետ համագործակցության համար

I. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՒ ՇՐՋԱՆԱԿԸ

Նախքան վերլուծությանն անդրադառնալը կարելու է ներկայացնել «Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի» գործով առանցքային փաստերը: 2012 թվականի ապրիլին դիմումատուն դատական հայց է ներկայացրել իր կնոջից ամուսնալուծվելու եւ նրան իր բնակարանից վտարելու մասին: Իրենց հերթին, նրա կինն ու որդին հայց են ներկայացրել նրան անգործունակ ճանաչելու մասին: Նույն տարում՝ ավելի ուշ, հոգեբուժական փորձագետների հանձնաժողովը եզրակացրել է, որ դիմումատուն տառապում է զառանցական խանգարումից, որի հետեւանքով նա զրկվել էր իր գործողությունների նշանակությունը հասկանալու եւ դրանք ղեկավարելու ունակությունից: 2013 թվականի նոյեմբերին Երեւանի Շենգավիթ վարչական շրջանի դատարանը պարոն Նիկոլյանին ճանաչել է անգործունակ: Այս որոշումն այնուհետեւ հաստատվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նշված ժամանակահատվածում գործող ներպետական իրավական կարգավորումների համաձայն՝ գործունակությունից զրկված անձը կարող էր դատարան դիմել բացառապես իր խնամակալի միջոցով: Այս համատեքստում խնամակալությունը պետք է կոնֆլիկտներից զերծ լիներ: Այնուամենայնիվ, դիմումատուին անգործունակ ճանաչելուց հետո խնամակալության եւ հոգաբարձության տեղական մարմինը որպես խնամակալ նշանակել է նրա որդուն՝ չնայած նրանց կոնֆլիկտային հարաբերություններին եւ դիմումատուի դեմ լինելուն: Այսպիսով, խնամակալության եւ հոգաբարձության մարմինը չի լսել դիմումատուին՝ չնայած հնարավորության դեպքում նրա ցանկությունները հաշվի առնելու իրավական պահանջին:

Այնուամենայնիվ, տվյալ դեպքում կասկածելի էր այն փաստը, թե արդյոք դիմումատուի որդին իսկապես չեզոք դիրքում է եղել, եւ չի եղել շահերի բախում, մասնավորապես՝ դիմումատուի կողմից իր կնոջից ամուսնալուծվելու եւ նրան վտարելու պահանջով նրա դեմ ներկայացված հայցի առնչությամբ: Որդու՝ որպես խնամակալի պահանջով ամուսնալուծության եւ վտարման գործերն ավարտվել են: ՄԻԵԴ-ը վճռել է, որ վարչական շրջանի դատարանը չի ուսումնասիրել այն հարցը, թե արդյոք դիմումատուի որդու՝ հայցից հրաժարվելու մասով պահանջը բխել է դիմումատուի լավագույն շահից, ինչպես նաեւ չի ներկայացրել այդ պահանջն ընդունելու մասին իր որոշման որեւէ բացատրություն: Ներպետական դատարանը դիմումատուի հայցից հրաժարվելու մասով պահանջն ընդունելիս չի իրականացրել

անհրաժեշտ ուսումնասիրությունն ու վերահսկողությունն: Հետեւաբար այդ վարույթներն ավարտելը հիմնավորված չի եղել:

Անգործունակ ճանաչելու վերաբերյալ որոշումը վերանայելու պահանջով դատարան դիմելու իրավունքն այն անձանց պաշտպանության հիմնարար դատավարական իրավունքներից մեկն էր, որոնք մասնակիորեն կամ ամբողջությամբ զրկվել էին գործունակությունից: Տվյալ ժամանակահատվածում Հայաստանում առկա՝ անգործունակ ճանաչված անձանց կողմից դատարանի ուղղակի մատչելիությունից օգտվելու նկատմամբ ընդհանուր արգելքով որեւէ հնարավորություն չի թողնվել բացառության համար: Ըստ ՄԻԵԴ-ի՝ տվյալ ժամանակահատվածում դիմումատուի համար իր գործունակության վերականգնման պահանջով դիմելու անհնարինությունն անհամաչափ էր հետապնդվող ցանկացած իրավաչափ նպատակի:

Ըստ Դատարանի՝ դիմումատուին գործունակությունից զրկելը ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով երաշխավորված մասնավոր կյանքի իրավունքին միջամտություն է հանդիսացել: Վարչական շրջանի դատարանը դիմումատուին անգործունակ ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելիս հիմնվել է բացառապես հոգեբուժական փորձագիտական եզրակացության վրա: Հոգեկան խանգարման առկայությունը, նույնիսկ լուրջ խանգարման դեպքում, չի կարող լինել գործունակությունից ամբողջությամբ զրկելը հիմնավորելու միակ պատճառը: Ազատությունից զրկելու վերաբերյալ գործերի հետ անալոգիայով, գործունակությունից ամբողջությամբ զրկելը հիմնավորելու համար հոգեկան խանգարումը պետք է լինի այդ միջոցի համար հիմք համարվող որոշակի «տեսակի կամ աստիճանի»:

ՄԻԵԴ-ը նաեւ վճռել է, որ հոգեբուժական փորձագիտական եզրակացության մեջ անհրաժեշտ մանրամասնությամբ չի վերլուծվել դիմումատուի անգործունակության աստիճանը: Եզրակացության մեջ չի բացատրվել, թե որ գործողությունները չի կարող դիմումատուն հասկանալ կամ ղեկավարել: Բացի այդ, չնայած դիմումատուի վիճակը պահանջել է նրա նկատմամբ պաշտպանության որեւէ տեսակի միջոց՝ ներպետական դատարանը չի ունեցել այլ ընտրություն, քան ամբողջական անգործունակության կիրառումն ու դրա պահպանումն է: Մասնավորապես, Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված չէին այնպիսի իրավիճակներին սահմանային կամ հարմարեցված լուծում տալու տարբերակներ,

ինչպես դիմումատուի դեպքում է: Դրանով տարբերակում էր կատարված միայն ամբողջությամբ գործունակի եւ ամբողջությամբ անգործունակի միջեւ: Ամենախիստ միջոցը նշանակում էր ինքնավարության լրիվ կորուստ կյանքի գրեթե բոլոր ոլորտներում:

Բժշկական եզրակացության օբյեկտիվությունը ենթադրում էր պահանջ, որ այն պետք է լինի հնարավորինս վերջերս կատարված: Այն հարցը, թե արդյոք բժշկական եզրակացությունը հնարավորինս վերջերս է կատարվել, թե՛ ոչ, կախված է գործի կոնկրետ հանգամանքներից: Հոգեբուժական փորձագիտական եզրակացությունը տրվել է 2012 թվականի սեպտեմբերին՝ դիմումատուին անգործունակ ճանաչելու մասին վճռից ավելի քան տասնչորս ամիս առաջ, եւ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ այդ վճիռն անփոփոխ թողնելու մասին որոշումից գրեթե մեկուկես տարի առաջ: Ուստի, ՄԻԵԴ-ը համարել է, որ այդ եզրակացությունը չի կարող դիտարկվել «արդիական»: Ավելին, դիմումատուն առաջին անգամ է ենթարկվել հոգեբուժական փորձաքննության, քանի որ նա չի ունեցել հոգեկան հիվանդության որեւէ պատմություն, եւ որեւէ բան չէր ենթադրում, որ դիմումատուի վիճակը հնարավոր չի եղել փոխել:

Վարչական շրջանի դատարանը հիմնվել է միայն այդ եզրակացության վրա՝ առանց կասկածի տակ դնելու, թե արդյոք տվյալ պահի դրությամբ այն ճշգրտորեն արտացոլել է դիմումատուի հոգեկան առողջության վիճակը: Ինչ վերաբերում է Վերաքննիչ քաղաքացիական դատարանին, այն անդրադարձել էր այնպիսի ապացույցների բացակայությանը, որոնցով կհերքվեին այդ եզրակացության մեջ առկա եզրահանգումները կամ կենթադրվեր, որ դիմումատուն առողջացել է՝ չնայած այն փաստին, որ ներպետական դատարանների պարտականությունն է եղել պահանջել այդպիսի ապացույցներ եւ անհրաժեշտության դեպքում նշանակել նոր բժշկական զննություն: Դիմումատուի նկատմամբ կիրառված միջոցը եղել է հետապնդված իրավաչափ նպատակին ոչ համաչափ: Արդյունքում դիմումատուի՝ 8-րդ հոդվածով սահմանված իրավունքները սահմանափակվել են ավելի խիստ ձեւով, քան անհրաժեշտ է եղել: Հետեւաբար ՄԻԵԴ-ը միաձայն գտել է, որ տեղի է ունեցել ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին եւ 8-րդ կետերի խախտում:

Ըստ Գործողությունների վերաբերյալ զեկույցի՝ Հայաստանի կառավարությունը սահմանել է երեք ընդհանուր միջոց: Առաջինը վերաբերում է անգործունակ ճանաչված անձանց կողմից դատարանի ուղղակի մատչելիության նկատմամբ

բլանկետային օրենսդրական արգելքին, որով որեւէ հնարավորություն չի թողնվել բացառության համար: Այս համատեքստում Կառավարությունը կարեւորել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի (ՔԴՕ) ընդունումը: Դրանով սահմանվում է անգործունակ ճանաչված անձանց՝ գործունակությունը վերականգնելու պահանջով դատարան դիմելու իրավունքը: ՔԴՕ-ի դրույթներով ներդրվում են մի շարք դատավարական երաշխիքներ, որոնք կարելի է թվարկել հետեւյալ կերպ.

- ▶ առաջին ատյանի դատարանը անձին անգործունակ ճանաչելու մասին դիմումը քննում է տվյալ անձի, նրա փաստաբանի ու խնամակալության մարմնի պարտադիր մասնակցությամբ եւ լսում է բոլոր մասնակիցների փաստարկները.
- ▶ կախված անգործունակ ճանաչված անձի առողջական վիճակից՝ դատարանը հայցը կարող է քննել նրա հաշվառման կամ նրա բնակության վայրում կամ հոգեբուժական հաստատությունում, որտեղ տվյալ անձին տեղավորել են.
- ▶ անձին անգործունակ ճանաչելու մասին դիմումը վարույթ ընդունելուց հետո դատարանն անձին տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն (անգործունակ ճանաչված անձը կարող է հրաժարվել հանրային պաշտպանի ծառայություններից եւ ունենալ իր ընտրությամբ պաշտպան).
- ▶ անգործունակ ճանաչված անձն ունի բոլոր դատավարական իրավունքները, ինչպիսիք են գործի նյութերին ծանոթանալը, ապացույցներ ներկայացնելը եւ դրանց հետազոտմանը մասնակցելը, միջնորդություններ ներկայացնելը, դատարանում ցուցմունք տալը, դատական նիստի ընթացքում ծագած բոլոր հարցերի վերաբերյալ իր փաստարկներն ու դիրքորոշումը ներկայացնելը, գործին մասնակցող այլ անձանց միջնորդությունների եւ փաստարկների առնչությամբ իր դիրքորոշումն արտահայտելը, դատական ակտերը բողոքարկելը եւ այլն.
- ▶ անգործունակ ճանաչված անձը ցանկացած պահի կարող է դիմել դատարան՝ իր գործունակությունը վերականգնելու պահանջով²:

² «Նիկոլյանս ընդդեմ Հայաստանի» (Գանգատ թիվ 74438/14, 2019 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռ) գործով Գործողությունների վերաբերյալ զեկույց, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ [https://hudoc.exec.coe.int/ENG?i=DH-DD\(2020\)1061E](https://hudoc.exec.coe.int/ENG?i=DH-DD(2020)1061E):

Նշված զարգացումները մանրամասն քննարկվել են «Անգործունակ անձանց համար արդարադատության մատչելիության եւ ազգային դատարանների որոշումների չկատարման կամ ուշ կատարման մասին» զեկույցում: Չեկույցում եզրակացություն է արվում առ այն, որ անձանց դատավարական երաշխիքները (օրինակ՝ անվճար իրավաբանական օգնությունը, տվյալ անձի, նրա փաստաբանի եւ խնամակալության մարմնի պարտադիր մասնակցությունը, անգործունակ ճանաչված անձի հստակ դատավարական կարգավիճակը դատավարության ընթացքում եւ գործին մասնակցող անձանց իրավունքները), որոնց գործունակությունը քննարկվում է, էապես ուժեղացվել են: Ավելին, որոշումների եր գործունակությունը վերականգնելու պահանջով անգործունակ ճանաչված անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքից զրկելու բլանկետային արգելքի վերացումը: Հաշվի առնելով այն փաստը, որ նշված զեկույցում եզրակացություն է արվել, որ «Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի» գործով ՄԻԵԴ-ի վճռով եւ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1197 որոշմամբ դատարանի մատչելիությանն առնչվող հարցերը լուծվել են ԶԴՕ-ում կատարված փոփոխությունների միջոցով, այս զեկույցում այդ հարցը մանրամասն չի քննարկվի, եւ ավելի մեծ ուշադրություն կդարձվի մյուս դիտարկումներին՝ մեծապես ուշադրություն դարձնելով այլ ընդհանուր միջոցներին³:

Հայաստանի կառավարության կողմից սահմանված հաջորդ ընդհանուր միջոցը կոնֆլիկտներից զերծ խնամակալության ապահովումն է: Այս համատեքստում նախատեսվում է, որ խնամակալության եւ հոգաբարձության մարմինները, մասնակցելով անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ դատական նիստերին, ավելի լավ կհասկանան անգործունակ ճանաչվող անձի եւ նրա հարազատների՝ որպես հնարավոր խնամակալների միջեւ եղած հարաբերությունների բնույթը: Արդյունքում հնարավոր կլինի ապահովել կոնֆլիկտներից զերծ խնամակալություն: Ընդունելով խնամակալության մարմնի կողմից դատական լուծումներին մասնակցելու կարելությունը ոչ միայն տեղեկատվություն ստանալու, այլ նաեւ դատարանի համար որպես տեղեկատվության կարելուր աղբյուր ծառայելու տեսանկյունից՝ այս առումով անհրաժեշտ է իրականացնել հետագա վերլուծություն եւ ձեռնարկել լրացուցիչ քայլեր: Դա պետք է նպատակաուղղված լինի

³ Եվրոպայի խորհրդի «Աջակցություն Հայաստանի կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով կայացված վճիռների կատարմանը» ծրագրի շրջանակում պատրաստված «Անգործունակ անձանց համար արդարադատության մատչելիության եւ ազգային դատարանների որոշումների չկատարման կամ ուշ կատարման մասին» զեկույց, Գլուխ I, «Բ» կետ, (ii) ենթակետ:

խնամակալության եւ հոգաբարձության մարմինների կարողությունների հզորացմանը՝ անգործունակ ճանաչված անձանց համար կոնֆլիկտներից զերծ խնամակալություն ապահովելու համար⁴:

Վերջին ընդհանուր միջոցը վերաբերում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ընդլայնմանն ուղղված իրավական նախաձեռնություններին եւ քաղաքականության մասով փաստաթղթերին: Ընդունվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքը: Այդ օրենքով սահմանվում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման եւ պաշտպանության պետական քաղաքականության հիմնական սկզբունքները: Այնուամենայնիվ, այս օրենքը սահմանափակվում է հաշմանդամություն ունեցող անձանց շրջանակով, ինչը պարտադիր կերպով չի ներառում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց:

ՀՀ կառավարությունը կարելորել է նաեւ Հայաստանի Հանրապետության դատաիրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարական ծրագիրը եւ Ծրագրից բխող միջոցառումների ցանկը, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2022 թվականների ծրագիրը ներառում է այն միջոցառումների ընդարձակ ցանկը, որոնք պետք է իրականացվեն ազգային օրենսդրության համապատասխանությունը միջազգային չափանիշներին ապահովելու համար⁵:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության 2020-2022 թվականների գործողությունների ծրագրում առկա է ուշադրության արժանի մի միջոցառում, որով նախատեսվում էր ապահովել հոգեկան խանգարում ունեցող, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մասնակցությունը նրանց վերաբերող որոշումների կայացման բոլոր գործընթացներին: Այն ներառում էր ոլորտի վերլուծություն եւ Բաղաքացիական օրենսգրքում (ԲՕ) փոփոխություններ կատարելու մասին առաջարկի ներկայացում Ազգային ժողով⁶:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

⁶ ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիր, Հավելված թիվ 2, Գործողություն 47, հասանելի է

Բացի այդ, անդրադառնալով այս միջոցառմանը՝ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ) մշակել է և շրջանառության մեջ է դրել Կառավարության որոշման նախագիծ՝ անգործունակության համակարգի վերանայման եւ աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրման նպատակով⁷: Այնուամենայնիվ, ըստ հաշվետվության՝ Կառավարության որոշումը չի ընդունվել, եւ նախագիծը վերադարձվել է ՀՀ ԱՍՀՆ:⁸

Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության՝ քննարկման փուլում գտնվող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով նախատեսվում է վերանայել անգործունակ ճանաչված անձանց դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ իրավակարգավորումները՝ բացառելով դատարան դիմելու եւ նրանց իրավունքներին եւ շահերին վերաբերող այլ հարցերի մասով դատարանում լսվելու նրանց իրավունքների անհամաչափ սահմանափակումները⁹:

ՄԻԵԴ-ի եզրակացությունների եւ վճիռների կատարման վիճակի վերաբերյալ վերը քննարկված հիմնական դիտարկման արդյունքում ի հայտ եկան մի քանի այլ հայեցակետեր, որոնց մասով անհրաժեշտ է ընդհանուր միջոցներ ձեռնարկել: Ամենախնդրահարույց հարցը իրավիճակներին, ինչպիսին դիմումատուն բախվել էր, սահմանային կամ հարմարեցված լուծում տալու տարբերակների բացակայությունն է: Այս առումով սույն ուսումնասիրության նպատակն է վերլուծել ԵԽ չափանիշները, այդ թվում՝ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը եւ այլ անդամ պետությունների փորձը, ներկայացնել առաջարկություններ գործունակության սահմանափակման տարբեր մակարդակներ սահմանելու վերաբերյալ:

«Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճռով ի հայտ եկած մեկ այլ խնդիր է այն,

հետեւյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138194>:

⁷ Անգործունակության ինստիտուտին ամենվրդ իրավակարգավորումների վերանայման եւ աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմի ներդրման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ <https://www.e-draft.am/projects/4923>:

⁸ Արդարադատության նախարարության կողմից հրապարակված՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի իրականացման 2022 թվականի հաշվետվություն, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ [https://moj.am/storage/uploads/%D5%84%D4%BB%D5%8A%202020-2022%20%D5%A9%D5%A9.%20%D4%B3%D4%BE%202022%20%D5%A9.%20%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%20\(2\).pdf](https://moj.am/storage/uploads/%D5%84%D4%BB%D5%8A%202020-2022%20%D5%A9%D5%A9.%20%D4%B3%D4%BE%202022%20%D5%A9.%20%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%20(2).pdf):

⁹ ՀՀ Կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 1674-Լ որոշմամբ հաստատված՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագիր, Հավելված թիվ 3, Գործողություն 3.12, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://moj.am/storage/uploads/1674.1.pdf>:

որ եզրակացությունը «արդիական» չէր: Ավելին, կարելի է նաեւ այլ ապացույցներ քննության առնելու մասով դատարանի պարտավորությունը: Երրորդ հարցը վերաբերում է կոնֆլիկտներից զերծ խնամակալությանը: Այս համատեքստում սույն զեկույցի շրջանակում վերլուծության են ենթարկվում խնամակալության եւ հոգաբարձության մարմինների դերի եւ լիազորությունների վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, եւ ներկայացվում են առաջարկություններ անգործունակ ճանաչված անձանց խնամակալության նկատմամբ պատշաճ վերահսկողություն ապահովելու նպատակով օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Չեկույցում վերլուծության ենթարկված վերջին հարցը վերաբերում է գործունակության վերանայմանը: Գործող կարգավորումների համաձայն՝ գործունակությունը կարող է վերականգնվել անգործունակ ճանաչված անձի կողմից անձամբ կամ նրա խնամակալի կողմից դիմում ներկայացնելու միջոցով: Այս զեկույցում քննարկվում են գործունակության վերականգնման հարցերի պարբերական մեխանիզմական վերանայման հնարավորությունն ու ձեւերը:

II. ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՅԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱԿՈՒՄՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ անձին գործունակությունից զրկելը կամ վերջինիս անգործունակ ճանաչելը խոչընդոտում է նրա՝ ինքնուրույն գործելու կարողությանը կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, ինչպես օրինակ՝ ցանկացած գույք ինքնուրույն վաճառելուն կամ գնելուն, աշխատելուն, ճանապարհորդելուն, իր բնակության վայրն ընտրելուն, միություններին անդամակցելուն եւ ամուսնանալուն եւ նույնիսկ թույլ է տալիս սահմանափակել նրա ազատությունն առանց նրա համաձայնության, ինչը ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին միջամտություն է¹⁰:

Թեեւ ՄԻԵԴ-ը գտնում է, որ գործունակությունը բացարձակ չէ, եւ անդամ պետություններն ունեն այն սահմանափակելու եւ նույնիսկ այն զրկելու մասով հայեցողական լիազորությունների շրջանակ, անհրաժեշտ է սահմանել դատավարական երաշխիքներ եւ ղեկավար սկզբունքներ: Մասնավորապես, անձանց սոցիալական պաշտպանությունն ապահովելու համար պետական մարմինները, բացի անձանց գործունակությունից զրկելու միջոցից, իրենց տրամադրության տակ պետք է ունենան նաեւ այլ միջոցներ: Տվյալ միջոցի կիրառումը պետք է խիստ անհրաժեշտ լինի. անձին գործունակությունից զրկելը խիստ միջոց է, որը պետք է կիրառել բացառիկ հանգամանքների դեպքում¹¹: Բացի այդ, հոգեկան առողջության խնդրի առկայությունը, նույնիսկ լուրջ խնդրի դեպքում, չի կարող լինել ամբողջությամբ անգործունակ ճանաչելը հիմնավորելու միակ պատճառը: Ազատությունից զրկելու վերաբերյալ գործերի հետ անալոգիայով գործունակությունից զրկելը հիմնավորելու համար հոգեկան առողջության խնդիրները պետք է լինեն այդ միջոցի կիրառումը երաշխավորող որոշակի «տեսակի կամ աստիճանի»¹²: Գործունակությունից զրկելը կարող է օրինական լինել, օրինակ, եթե անձը չի կարողանում վերահսկել իրեն, ինչն

¹⁰ Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի [*Shtukaturov v. Russia*] (Գանգատ թիվ 44009/05, 2008 թվականի մարտի 27-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-85611>: Մաթթերն ընդդեմ Սլովակիայի [*Matter v. Slovakia*] (Գանգատ թիվ 31534/96, 1999 թվականի հուլիսի 5-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-58266>:

¹¹ X-ը եւ Y-ն ընդդեմ Խորվաթիայի [*X and Y v. Croatia*] (Գանգատ թիվ 5193/09, 2012 թվականի փետրվարի 3-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-107303>:

¹² Ա.Ն.-ն ընդդեմ Լիտվայի [*A.N. v. Lithuania*] (Գանգատ թիվ 17280/08, 2016 թվականի մայիսի 31-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/?i=002-11075>:

առաջացնում է սոցիալական կյանքի կամ առողջության հետ կապված խնդիրներ¹³, կամ երբ անհրաժեշտ է պահպանել հասարակական կարգը եւ ապահովել այլ անձանց իրավունքները¹⁴:

Սա հաստատվել է նաեւ Հայաստանի Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1197 որոշմամբ, որը հղում է կատարում ԵԽ համապատասխան չափանիշներին, ներառյալ՝ Նախարարների կոմիտեի (ՆԿ) առաջարկություններին, որոնցում նշվում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք պետք է ունենան քաղաքացիական եւ քաղաքական բոլոր իրավունքներն իրացնելու հնարավորություն: Այդ իրավունքների սահմանափակումները թույլատրվում են բացառապես Կոնվենցիային խիստ համապատասխան եւ չեն կարող հիմնվել միայն անձի մոտ հոգեկան առողջության խնդիրների առկայության փաստի վրա¹⁵:

Գործունակության սահմանափակման իրավաչափ նպատակը ենթադրում է օրենքում դրա ամրագրում եւ համաչափության սկզբունքի ապահովում: Դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե օրենսդրությամբ հնարավորություն նախատեսվի ապահովելու անհատական եւ հարմարեցված մոտեցումներ ցանկացած գործի նկատմամբ: Ուստի, ինչպես ՄԻԵԴ-ը վճռել է նաեւ «Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի» գործով, գործունակության սահմանափակումը պետք է լինի անհրաժեշտ աստիճանի: Այսպիսով, օրենսդրությամբ չպետք է նախատեսվի երկու ծայրահեղ հնարավորություն՝ լիարժեք գործունակություն կամ գործունակությունից ամբողջությամբ զրկում, այլ դատարանների համար պետք է նախատեսվեն գործունակությունը սահմանափակելու ավելի ճկուն տարբերակներ¹⁶:

ՆԿ-ի 1999 թվականի փետրվարի 23-ի «Չափահաս անգործունակ անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ սկզբունքների մասին» թիվ R(99)4 հանձնարարականով սահմանվում է, որ միջամտությունը պետք է լինի նվազագույն

¹³ Բոչին ընդդեմ Հունգարիայի [*Bocsi v. Hungary*] (Գանգատ թիվ 24240/94, 1998 թվականի մայիսի 21-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22docname%22:%5B%22bocsi%22%2C%22documentcollectionid%22:%5B%22JUDGMENTS%22%2C%22DECISIONS%22%2C%22itemid%22:%5B%22001-4242%22%5D%7D>:

¹⁴ Օլլիան ընդդեմ Ֆինլանդիայի [*Ollila v. Finland*] (Գանգատ թիվ 18969/91, 1992 թվականի նոյեմբերի 30-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22docname%22:%5B%22ollila%22%2C%22documentcollectionid%22:%5B%22JUDGMENTS%22%2C%22DECISIONS%22%2C%22itemid%22:%5B%22001-1438%22%5D%7D>:

¹⁵ Սահմանադրական դատարանի 2015 թվականի ապրիլի 7-ի թիվ ՍԴ-1197 որոշում, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=96759>:

¹⁶ Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի (Գանգատ թիվ 74438/14, 2019 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-196149>:

անհրաժեշտ ծավալի: Մասնավորապես կշվում է, որ պաշտպանության միջոցի անհրաժեշտ լինելու դեպքում այն պետք է համաչափ լինի տվյալ անձի կարողությունների աստիճանին եւ համապատասխանեցվի տվյալ անձի անհատական հանգամանքներին եւ կարիքներին: Պաշտպանության միջոցը տվյալ անձի գործունակության, իրավունքների եւ ազատությունների նկատմամբ պետք է կիրառվի նվազագույն չափով՝ միջամտության նպատակին համապատասխան: Հետեւաբար օրենսդրությամբ պետք է նախատեսվեն տարբեր աստիճանի սահմանափակումներ, որոնք կարող են ժամանակի ընթացքում փոփոխվել: Համապատասխանաբար պաշտպանության միջոցը չպետք է ինքնաբերաբար հանգեցնի գործունակության ամբողջական վերացմանը:

Այնուամենայնիվ, գործունակության սահմանափակումը պետք է հնարավոր լինի այն դեպքում, երբ ապացուցվում է, որ այն անհրաժեշտ է տվյալ անձին պաշտպանելու համար: Մասնավորապես պաշտպանության միջոցի կիրառման արդյունքում տվյալ անձը չպետք է ինքնաբերաբար զրկվի ընտրելու, կտակ կազմելու, կամ առողջության հետ կապված որեւէ միջամտության մասով համաձայնություն տալու կամ այն մերժելու, կամ անձնական բնույթի որեւէ այլ որոշում կայացնելու իրավունքից այն ժամանակ, երբ նրա ունակությունը թույլ է տալիս անել դա: Պետք է հաշվի առնել այն իրավական կարգավորումները, որոնց համաձայն, նույնիսկ այն դեպքում, երբ որոշակի բնագավառում անհրաժեշտ է ներկայացուցչի ներկայությունը, չափահաս անձին կարող է թույլատրվել ձեռնարկելու հատուկ գործողություններ կամ գործողություններ կոնկրետ բնագավառում՝ ներկայացուցչի համաձայնությամբ: Հնարավորության դեպքում չափահասը պետք է հնարավորություն ունենա կենցաղային բնույթի վավեր գործարքներ կնքելու¹⁷:

Չնայած օրենքի առջեւ հավասարության սկզբունքների, ինչպես նաեւ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների համաչափ ու ըստ անհրաժեշտության սահմանափակման կարեւորությանը՝ ներպետական օրենսդրությամբ չի թույլատրվում սահմանափակել անձի գործունակությունը, այլ նախատեսված է միայն ամբողջությամբ անգործունակ ճանաչելը: Այն չի նախատեսում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց

¹⁷ Եւ Նախարարների կոմիտեի 1999 թվականի փետրվարի 23-ի «Չափահաս անգործունակ անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ սկզբունքների մասին» թիվ R(99)4 առաջարկություն, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ [https://www.coe.int/t/dg3/healthbioethic/texts_and_documents/Rec\(99\)4E.pdf](https://www.coe.int/t/dg3/healthbioethic/texts_and_documents/Rec(99)4E.pdf):

գործունակության տարբեր մակարդակներ՝ այդպիսով սահմանափակելով անհատական մոտեցում ցուցաբերելու հնարավորությունը: Այս օրենսդրական խնդրի պատճառով դատարաններն ընտրության շատ տարբերակներ չունեն. կամ դրանք մերժում են անձին անգործունակ ճանաչելու դիմումը, կամ որոշում են կայացնում գործունակությունից ամբողջությամբ զրկելու մասին: Հարմարեցված համակարգի առկայությունը գործունակության սահմանափակման չափն անձի հոգեկան ունակությանը հարմարեցնելու հնարավորություն կտար՝ ապահովելով համաչափության սկզբունքը: Գործող կանոնակարգերի համաձայն, եթե անձն անգործունակ է ճանաչվում, ապա միակ իրավունքը, որը նա պահպանում է, գործունակությունը վերականգնելու համար դատարանի մատչելիության իրավունքն է:

Այս համատեքստում կարելու է քննարկել Վճռաբեկ դատարանի՝ գործունակությունից զրկելու չափորոշիչներ սահմանելու, իրավական պրակտիկայի զարգացման անհրաժեշտությունը որոշելու եւ միասնական ու կանխատեսելի պրակտիկա ապահովելու վերաբերյալ թիվ ՍԴ/1224/02/01 որոշումը: Մասնավորապես դրանում մեկնաբանվում է Քաղաքացիական օրենսգրքում օգտագործված «հոգեկան խանգարում» եզրույթը՝ հղում կատարելով նաեւ «Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճռին եւ սահմանելով «անգործունակություն» հասկացությունը: Ըստ դատարանի՝ անգործունակությունն իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու եւ իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու եւ դրանք կատարելու քաղաքացու ունակության բացակայությունն է: Այն ավելացնում է, որ քաղաքացուն անգործունակ ճանաչելու անհրաժեշտ պայմանը հոգեկան խանգարման հետեւանքով իր գործողությունների նշանակությունը չհասկանալու կամ դրանք ղեկավարել չկարողանալու փաստի արձանագրումն է: Դատարանն ընդգծում է, որ գործունակությունից զրկելու համաչափության գնահատումը պետք է հիմնված լինի այնպիսի չափորոշիչների վրա, ինչպիսիք են վարքային խանգարման խորությունը (ծանրությունը) եւ այն հանգամանքը, թե արդյոք դրա համար խնամք եւ բուժում է անհրաժեշտ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացու կողմից իր գործողությունների նշանակությունը չհասկանալու կամ դրանք ղեկավարել չկարողանալու բավարար պայման է որոշակի «տեսակի կամ աստիճանի» վարքային խանգարումը որպես հոգեկան առողջության հետ կապված խնդիրների

հետեւանք դիտարկելու համար, որոնք կարող են առաջանալ նաեւ առանց հոգեկան խանգարման: Անհրաժեշտ է որոշակի գործառույթների եւ վարքային խանգարումների այնպիսի դրսեւորում, որը հնարավորություն կտա անվերապահորեն բացահայտելու, թե քաղաքացին որ գործողությունները չի կարողանում հասկանալ կամ ղեկավարել՝ հստակ պատկերացում կազմելու քաղաքացու հիվանդության աստիճանի, նրա սոցիալական կյանքի, առողջության, նյութական շահերի եւ այլնի վրա նրա հիվանդության հնարավոր հետեւանքների մասին եւ որպէս այդ ամենի արդյունք՝ նաեւ քաղաքացուն անգործունակ ճանաչելու միջոցի կիրառման համաչափության մասին:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը գործունակությունից զրկելու գործերով ապացույցների գնահատման վերաբերյալ որոշ ուղենիշներ է տրամադրել ստորին ատյանի դատարաններին: Դատարանի կողմից նշված հիմնական սկզբունքն այն է, որ գործունակությունից զրկելը կարելու է եւ պետք է կիրառելի լինի, ինչպէս նաեւ այն, որ հոգեկան խանգարումը ներառում է նաեւ վարքային խանգարումներ: Որոշման եզրափակիչ մասում դատարանը [գործը] հետ է ուղարկել նոր քննության եւ կարգադրել է ավելի կոնկրետ հարցեր ուղղել դատահոգեբուժական փորձագետներին¹⁸:

Եւս այլ անդամ պետությունների ներպետական օրենսդրության եւ փորձի վերլուծությունը մի քանի մոդելներ է բացահայտել: Դրանցից մեկը Բաղաքացիական օրենսգրքում ամրագրված սահմանափակ գործունակության համակարգի զարգացումը եւ դրանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ընդգրկումն է: Այս մեխանիզմը մնացել է դեռեւս, այսպէս կոչված, «խորհրդային ժամանակաշրջանից» եւ գործում է նաեւ Հայաստանում: Դա վերաբերում է այն անձանց, որոնք ավրոհողի կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպէս նաեւ մոլեխաղերից կախվածության հետեւանքով իրենց ընտանիքը դրել են նյութական ծանր դրության մեջ: Այս պատճառով է, որ դա եղել է հետխորհրդային երկրներում, ինչի մասին կխոսվի ստորեւ:

Հայաստանում դատարանը կարող է ԶԴՕ-ով սահմանված ընթացակարգով սահմանափակել գործունակությունը եւ անձի նկատմամբ հոգաբարձություն սահմանել: Անձը, որի գործունակությունը սահմանափակվել է, կարող է կնքել այլ գործարքներ, ինչպէս նաեւ ստանալ աշխատավարձ, կենսաթոշակ եւ այլ

¹⁸ Վճռաբեկ դատարանի 2023 թվականի ապրիլի 6-ի թիվ ՍԴ/1224/02/01 որոշում, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.cassationcourt.am/precedent/precedent-single-decision/civil-cases/2020>:

եկամուտներ եւ տնօրինել դրանք միայն հոգաբարձուի համաձայնությամբ: Անձի գործունակության սահմանափակման հիմքերը վերանալու դեպքում դատարանը վերացնում է նրա գործունակության սահմանափակումը: Դատարանի որոշման հիման վրա՝ անձի նկատմամբ սահմանված հոգաբարձությունը վերացվում է:

Այսպիսի սահմանափակման հիմնական նպատակն է սահմանափակել անձի ինքնուրույնությունը նրա գույքի վերաբերյալ որոշումներ կայացնելիս՝ պահպանելով միայն մանր կենցաղային գործարքներն ինքնուրույն կնքելու իրավունքը: Դա չի վերաբերում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց: Սահմանափակումների նպատակն ու շրջանակը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց եւ այն անձանց դեպքում, որոնք ակոհողի կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաեւ մոլեխաղերից կախվածության հետեւանքով իրենց ընտանիքը դրել են նյութական ծանր դրության մեջ, էականորեն տարբերվում են:

Այլ պետություններում այս մեխանիզմի հետ կապված բարեփոխումները քննարկելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել «Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի» [*Shtukaturon v. Russia*] ՄԻԵԴ-ի գործին, որը «Ռակեվիչն ընդդեմ Ռուսաստանի» [*Rakevich v. Russia*] գործերի խմբի մաս է կազմում: Տվյալ ժամանակահատվածում Ռուսաստանի ներպետական կանոնակարգերը շատ նման էին Հայաստանում գործող կանոնակարգերին. ներպետական դատարանները կամ պետք է անձին ճանաչեն լրիվ անգործունակ, կամ մերժեն անձին անգործունակ ճանաչելու դիմումը՝ չունենալով համաչափ որոշում կայացնելու հնարավորության: Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքով, ի թիվս իրականացված ընդհանուր բնույթի այլ միջոցների, նախատեսված է գործունակության երրորդ՝ միջանկյալ կարգավիճակ այդ վճիռները կատարելու համար¹⁹: Ընդ որում, Նախարարների կոմիտեն իրականացված ընդհանուր բնույթի միջոցները, այդ թվում՝ քաղաքացիական օրենսգրքում կատարված բարեփոխումները համարել է բավարար, իսկ «Ռակեվիչն ընդդեմ Ռուսաստանի» գործերի խումբը, այդ թվում՝ «Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի» գործը համարել է կատարված եւ փակված²⁰:

¹⁹ «Ռակեվիչն եւ 8 այլ գործեր ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» [*Rakevich and 8 other cases v. Russian Federation*] (Գանգատ թիվ 58973/00) գործով Գործողությունների վերաբերյալ գեկույց (2020 թվականի նոյեմբերի 18), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://rm.coe.int/0900001680a075df>:

²⁰ CM/ResDH(2020)333 բանաձեւը Ռուսաստանի Դաշնության դեմ թվով ինը գործերի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վերաբերյալ, հասանելի է

Մասնավորապես Ռուսաստանի քաղաքացիական օրենսգրքում սահմանվում է, որ Զաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանը կարող է սահմանափակել այն անձի գործունակությունը, որը հոգեկան առողջության հետ կապված խնդիրների պատճառով միայն այլ անձանց օգնությամբ է կարողանում հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք: Նրա նկատմամբ սահմանվում է հոգաբարձություն: Այդ մարդկանց կողմից իրականացվող ֆինանսական գործարքները սահմանափակվում են, իսկ որոշ դեպքերում դրանց համար անհրաժեշտ է հոգաբարձուի հավանությունը: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ այն անձը, որի գործունակությունը սահմանափակված է հոգեկան առողջության հետ կապված խնդիրների պատճառով, ինքնուրույն գույքային պատասխանատվություն է կրում իր կնքած գործարքների համար²¹:

Այնուամենայնիվ, «Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի» գործով վճռի շրջանակներում կատարված ներպետական օրենսդրական փոփոխությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բարեփոխումը թերություններ ունի. դրանով անհատական մոտեցման հնարավորություն չի նախատեսվում, իսկ որոշ դեպքերում այն ձեւական բնույթ ունի՝ ուշադրությունը կենտրոնացնելով ավելի շուտ այն անձի սեփականության իրավունքի վրա, որի գործունակությունը սահմանափակվել է:

Ըստ Հոգեբուժական իրավապաշտպան կենտրոնի՝ միայն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ սահմանափակ գործունակության մեխանիզմի կիրառումը չի հանգեցնի բարելավման: Այդ կերպ, գործունակության սահմանափակմամբ չի ապահովվի միջոցի ճկուն, համաչափ եւ արդյունավետ կիրառումը: Շատ երկրների օրենսդրություններ պարունակում են որոշումների կայացման այն ոլորտների ցանկը, որտեղ կարելի է կիրառել խնամակալության միջոցը, ինչպես նաեւ այն իրավունքների ցանկը, որոնք չեն կարող սահմանափակվել ոչ մի պարագայում (օրինակ՝ խնամակալության տակ գտնվող անձիք միշտ կարող են ունենալ արդարադատության մատչելիության

հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.exec.coe.int/eng?i=001-207280>:

²¹ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգիրք, 30-րդ հոդված, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/a7eba7d96ab59aedad870b2adf2bba34dcc30c3e/:

իրավունք)²²:

Բացի այդ, Ռուսաստանի քաղաքացիական օրենսդրությամբ հոգեկան առողջության խնդիրների միջև տարբերակում չի դրվում: Այսպես, տեսականորեն անձին որպես սահմանափակ գործունակություն ունեցող ճանաչելու համար բավարար է հոգեկան առողջության հետ կապված որեւէ խնդրի առկայություն, քանի դեռ կոնկրետ դեպքերում չի հաստատվել, որ այդ խնդրի արդյունքում անձը միայն այլ անձի օգնությամբ կարող է հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք: Ակնհայտ է, որ նման դեպքերում նախքան դատարանի կողմից համապատասխան որոշում ընդունելը պետք է դատահոգեբուժական, դատահոգեբանական կամ դատահոգեբանական եւ դատահոգեբուժական համալիր փորձաքննություն անցկացվի: Դատարանը պետք է գնահատի փորձագիտական եզրակացությունը գործի այլ հանգամանքների հետ միասին:

Նմանատիպ լուծում է մշակվել Ուկրաինայում, որի միջոցով սահմանափակ գործունակության ինստիտուտի շրջանակն ընդլայնվում է՝ ներառելով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց: Մասնավորապես Զաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ դատարանը կարող է սահմանափակել անձի գործունակությունը, եթե վերջինս տառապում է հոգեկան առողջության այնպիսի խնդրով, որն զգալիորեն ազդում է իր գործողությունների նշանակությունը հասկանալու եւ (կամ) դրանք ղեկավարելու նրա կարողության վրա: Ուկրաինայի օրենսդրությամբ ընդգծվել է անձի՝ իր գործողությունների նշանակությունը հասկանալու եւ (կամ) դրանք ղեկավարելու ունակության վրա հոգեկան առողջության խնդրի ազդեցության նշանակությունը սահմանելու անհրաժեշտությունը²³:

Որպես համեմատություն՝ Ռուսաստանի օրենսդրությունը նույնպես պարունակում է Էականության տարր, սակայն այլ ձեւակերպմամբ. հոգեկան առողջության խնդիրների հետ կապված անձի գործունակության սահմանափակումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ նա կարող է հասկանալ իր գործողությունների

²² «Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի ամբողջական կատարման համար անհրաժեշտ օրենսդրական միջոցների վերաբերյալ առաջարկություններ», Հոգեբուժական իրավապաշտպան կենտրոն, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ https://www.mdac.org/sites/mdac.info/files/Russian_Shtukaturov_v_Russia.pdf:

²³ Ուկրաինայի Զաղաքացիական օրենսգիրք, 36-րդ հոդված, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://zakon.rada.gov.ua/laws/show/en/435-15#Text>:

Նշանակությունը կամ ղեկավարել դրանք միայն այլ անձի օգնությամբ: Եթե անձը, նույնիսկ մեկ այլ անձի օգնությամբ, չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, ապա նրան պետք է ճանաչել անգործունակ: Եվ հակառակը, եթե նույնիսկ հոգեկան առողջության խնդիր ունենալով՝ անձն իր գործողությունների նշանակությունը կարող է հասկանալ կամ դրանք ղեկավարել առանց այլ անձի օգնության, ապա նրա գործունակությունը պետք է անձեռնմխելի մնա²⁴:

Լիտվայում անգործունակ ճանաչելու իրավական գործընթացը կարգավորող եւ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքները երաշխավորող օրենսդրական դաշտը բարեփոխվել է 2016 թվականին, ի թիվս այլնի, Բաղաքացիական օրենսգրքում, Բաղաքացիական դատավարության օրենսգրքում եւ «Պետության կողմից երաշխավորվող իրավական օգնության մասին» օրենքի փոփոխություններով, ինչի արդյունքում դատարաններին հնարավորություն էր ընձեռվել հոգեկան առողջության խնդիրներով տառապող անձին անգործունակ ճանաչել միայն իր կյանքի որոշակի ոլորտում: Նման դեպքերում դատարանը պետք է տրամադրի այն ոլորտների հստակ ցանկը, որտեղ սահմանափակ գործունակ ճանաչված անձը չի կարող ինքնուրույն գործել²⁵: Այս փոփոխություններից հետո Նախարարների կոմիտեն փակեց գործը²⁶: Վերոնշյալ որոշ պետություններում դեռեւս գործում են գործունակությունից ամբողջությամբ զրկելու եւ ամբողջական խնամակալության մեխանիզմները:

Մեկ այլ մոդելի համաձայն՝ Եւս որոշ անդամ պետություններ վերացրել են գործունակությունից ամբողջությամբ զրկելու մեխանիզմը եւ թողել են միայն գործունակությունը սահմանափակելու հնարավորությունը՝ ուշադրություն դարձնելով գործարքներ կատարելիս ինքնուրույնության սահմանափակման վրա: Օրինակ՝ Էստոնիայի քաղաքացիական օրենսգրքի Ընդհանուր մասի համաձայն՝

²⁴ «Հոգեկան խանգարումների պատճառով սահմանափակ գործունակություն ունեցող քաղաքացիների իրավական կարգավիճակը» [“Legal status of citizens limited in legal capacity due to mental disorder”], Բոգդանով Ե.Վ., Ռուսաստանի արդարադատության նախարարության Ռուսաստանի իրավական ակադեմիայի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <http://psyhosp.ru/about/articles/pravovoe-polozhenie-grazhdan-ogranichennykh-v-deesposobnosti-vsledstvie-psikhicheskogo-rasstroystva/>:

²⁵ Դ.Դ.-ն ընդդեմ Լիտվայի [D.D. v. Lithuania] (Գանգատ թիվ 13469/06) գործով Գործողությունների վերաբերյալ զեկույց (2020 թվականի փետրվարի 14), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.exec.coe.int/?i=004-4336>:

²⁶ CM/ResDH(2020)267 բանաձեւ, Դ.Դ.-ն ընդդեմ Լիտվայի գործի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի կատարում, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.exec.coe.int/?i=001-206922>:

այն անձինք, որոնք հոգեկան առողջության խնդիրների պատճառով մշտապես անկարող են հասկանալ կամ ղեկավարել իրենց գործողությունները, սահմանափակ գործունակություն ունեն: Չափահասի սահմանափակ գործունակությունն ազդում է անձի կողմից կնքված գործարքների վավերականության վրա միայն այնքանով, որքանով նա չի կարող հասկանալ կամ ղեկավարել իր գործողությունները: Եթե դատարանն այդ անձի համար խնամակալ է նշանակում, ապա ենթադրվում է, որ նրա գործունակությունը սահմանափակված է այնքանով, որքանով նրա նկատմամբ խնամակալ է նշանակվել²⁷:

Չտեսաբար դատարանն այլևս որեւէ մեկին անգործունակ չի ճանաչում, այլ փոխարենը, անհրաժեշտության դեպքում անձին ճանաչում է որպես սահմանափակ գործունակություն ունեցող: Ուստի, սահմանափակ գործունակությունն օբյեկտիվ կարգավիճակ է: Էստոնիան ելնում է այն սկզբունքից, որ որեւէ մեկին որեւէ պատճառով անգործունակ համարելը կամ ճանաչելը ժողովրդավարական չէ: Նույնիսկ հոգեկան խանգարում ունեցող անձին պետք է տրվեն որոշակի իրավունքներ, որոնք նա կարող է իրացնել ինքնուրույն: Դա անելու անձի կարողությունը կախված է կոնկրետ հանգամանքներից²⁸: Համանման մոտեցում առկա է Ավստրիայում²⁹:

Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ անձն օրենքի իմաստով գործունակ է, եթե հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունենալով՝ ռացիոնալ գործելու ունակ է: Անձը չի կարող ինքնուրույն գործել, եթե անգործունակ է կամ ենթակա է ընդհանուր խնամակալության: Այն անձինք, որոնք գործունակ են, սակայն ունակ չեն գործելու, կարող են պարտավորություններ ստանձնել կամ հրաժարվել իրավունքներից միայն իրենց օրինական ներկայացուցչի համաձայնությամբ: Առանց այդ համաձայնության նրանք կարող են միայն օգտվել ինչ-որ օգուտներից, որոնք անվճար են, կամ մանր կենցաղային գործարքներ կնքել: Նրանք պատասխանատու են չթույլատրված գործողությունների հետեւանքով

²⁷ Էստոնիայի քաղաքացիական օրենսգրքի Ընդհանուր մաս, 8-րդ հոդված, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.riigiteataja.ee/en/eli/528082015004/consolide>:

²⁸ «Գործունակության սահմանափակումներ» [“Restrictions on Active Legal Capacity”], Փոլ Վարուլ, Անու Ավի եւ Թրին Կվիրիսիլո, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ https://www.juridicainternational.eu/public/pdf/ji_2004_1_99.pdf:

²⁹ Ավստրիայի ընդհանուր քաղաքացիական օրենսգրք, 21-րդ եւ 24-րդ հոդվածներ, հասանելի են հետեւյալ հղմամբ՝ <https://www.ris.bka.gv.at/GeltendeFassung.wxe?Abfrage=Bundesnormen&Gesetzesnummer=10001622>:

որոշվել է, որ նա «գործունակ չէ»³³: Քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված է, որ դատարանը կարող է սահմանափակել անձի գործունակությունն այնքանով, որքանով որ նա ունակ չէ իրավաբանական գործողություններ կատարել հոգեկան խանգարման պատճառով, որը միայն ժամանակավոր չէ, եւ սահմանել, թե որքանով է սահմանափակել անձի՝ ինքնուրույն իրավաբանական գործողություններ կատարելու ունակությունը³⁴:

Երրորդ մոդելը գործունակության սահմանափակումը որոշումների կայացման հարցում աջակցության համակարգի հետ միավորելն է: Սահմանադրական դատարանի կայացրած որոշումից հետո Վրաստանի քաղաքացիական օրենսգիրքը փոփոխվել է, եւ այժմ այն սահմանում է, որ «աջակցության շահառուին տրամադրվում է աջակցություն»: Հետեւաբար կա դիտարկում, որ չպետք է զրկել գործունակությունից, այլ փոխարենը պետք է ստեղծվեն աջակցության համակարգեր՝ այդ գործունակության իրացումն ապահովելու համար: Քաղաքացիական օրենսգրքով նախատեսվում է, որ դատարանը կարող է հայտարարություն անել, որով անձը ճանաչվում է որպես «աջակցության շահառու», կարող է նշանակել աջակցող, սահմանել աջակցության սահմանները եւ աջակցողի իրավունքներն ու պարտականությունները: Քաղաքացիական օրենսգրքով նախատեսվում են «բացառիկ դեպքեր», երբ «օբյեկտիվորեն անհնար է, որ աջակցողն աջակցության շահառուի մտադրության մասին հայտարարի մեկ ամսից ավելի ժամկետում, եւ որ աջակցության շահառուի փոխարեն որոշում կայացնելու արգելքը կարող է էական վնաս հասցնել նրան», երբ դատարանն աջակցողին կարող է լիազորել աջակցության շահառուի անունից եւ նրա շահերից ելնելով՝ կնքել «անհրաժեշտ» գործարքներ: Մեկնաբանվել է, որ այս դրույթը կիրառելի կլինի միայն այն դեպքերում, երբ անձը մեկ ամսից ավելի քնախտի մեջ է, իսկ նրա գույքին որոշակի վտանգ է սպառնում, ինչի արդյունքում անհրաժեշտ է դառնում, որ օրինական ներկայացուցիչն այդ շահերի առնչությամբ որոշումներ կայացնի³⁵:

Եւս մի քանի անդամ պետություններում իրականացվել են որոշումների կայացման գործընթացին աջակցության վերաբերյալ պիլոտային ծրագրեր: Դրանք տեղի են ունեցել երկու համատեքստում՝ որպես օրենսդրական բարեփոխումների

³³ Նույն տեղում:

³⁴ Չեխիայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 57(1) բաժին, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <http://obcanskyzakonik.justice.cz/images/pdf/Civil-Code.pdf>:

³⁵ Նույն տեղում:

գործընթացի մաս եւ օրենսդրական բարեփոխումների օգտին «գործ սկսել»: Այդ պետություններն են Չեխիայի Հանրապետությունը, Լատվիան եւ Բուլղարիան³⁶:

Վերջին տարբերակն Իռլանդիայում գոյություն ունեցող՝ առանց հոգեկան առողջության խնդիրների հիմքով անձի գործունակությունը սահմանափակելու աջակցության վրա հիմնված որոշումների կայացման համակարգն է: Իռլանդիայի օրենսդրությամբ ամրագրված են «որոշումների կայացման հարցում օգնական» նշանակելու վերաբերյալ կանոնակարգեր՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրենց «անձնական բարեկեցության կամ գույքի եւ գործերի վերաբերյալ» որոշումներ կայացնելու հարցում օգնելու նպատակով: Օգնականն իրեն նշանակողի անունից որոշում կայացնելու իրավունք չունի³⁷:

Հարկ է նշել, որ ԵԽ մի շարք մարմիններ խրախուսում են ավանդական խնամակալության համակարգից աջակցության վրա հիմնված որոշումների կայացման համակարգին անցումը: Եվրոպայի խորհուրդն ակտիվորեն զբաղվում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ գործունակությանն առնչվող իրավունքների հարցով՝ ցուցաբերելով մարդու իրավունքների հետեւողական զարգացում: Այն ձգտում է իր փաստաթղթերը համապատասխանեցնել մարդու իրավունքների համընդհանուր չափանիշներին՝ մեկնաբանություն պարունակող պրակտիկայի եւ զարգացմանը նպաստող մոտեցումների միջոցով: Օրինակ՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն կոչ է անում անդամ պետություններին ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք օգտվեն քաղաքական եւ հասարակական կյանքին մասնակցելու հավասար իրավունքներից, ներառյալ՝ ընտրելու եւ ընտրվելու իրավունքը՝ առանց իրենց հաշմանդամության կամ ենթադրվող ունակությունների հիմքով խտրականության՝ միջազգային կոնվենցիաներին եւ նախադեպային իրավունքին համապատասխան³⁸:

Թիվ 1642 (2009) բանաձեւում ԵԽ Խորհրդարանական վեհաժողովն ընդգծում է այն բանի կարեւորությունը, որ հաշմանդամություն ունեցող անձինք այլ անձանց հետ հավասար պահպանեն եւ իրացնեն գործունակությունը: Այն կոչ է անում համապատասխան միջոցներ ձեռնարկել եւ որոշումների կայացման հարցում աջակցություն տրամադրել՝ միաժամանակ ճանաչելով խնամակալության տակ գտնվող անձանց իրավունքները, ներառյալ՝ չարաշահումների դեմ երաշխիքները:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Նույն տեղում:

³⁸ Նույն տեղում:

Չնայած այն բանին, որ որոշակի հանգամանքներում թույլատրվում են փոխարինողի կողմից որոշումների կայացման որոշ ձեւեր, բանաձեւի շրջանակում առաջնահերթություն է տրվում անհատական ինքնուրույնությանը եւ աջակցության անհրաժեշտությանը³⁹:

Եւս մարդու իրավունքների հանձնակատարը 2012 թվականի Յետազոտական գեկույցում ընդգծել է, որ Եւս անդամ պետություններին առաջարկվել է վերանայել գործող օրենսդրությունը, վերացնել գործունակությունից ամբողջությամբ զրկելու եւ ամբողջական խնամակալության մեխանիզմները, ապահովել խնամակալությունը վիճարկելու իրավունքը, մշակել աջակցության վրա հիմնված որոշումների կայացման այլընտրանքներ եւ հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավել բարեփոխումների գործընթացներում: Փաստաթղթում ընդգծվում է փոխարինողի կողմից որոշումների կայացման համակարգից աջակցության վրա հիմնված մոդելներին անցնելու անհրաժեշտությունը՝ միաժամանակ ապահովելով անհապաղ դատավարական երաշխիքներ այն անձանց համար, որոնք զրկվել են գործունակությունից՝ մինչեւ անդամ պետությունների կողմից օրենսդրական բարեփոխումներ կիրականացվեն⁴⁰:

Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալության «Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց եւ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործունակություն» փաստաթղթի ուսումնասիրությունն ի ցույց է դնում այս հարցի հետ կապված՝ ավելի շատ կոնկրետ երկրին բնորոշ փորձ⁴¹:

Վերադառնալով հայաստանյան համատեքստին՝ ինչպես ընդգծվել է փորձագիտական քննարկումների եւ հարցազրույցների ժամանակ, ցանկալի է ոլորտի բարեփոխումներն իրականացնել «քայլ առ քայլ»: Սա նշանակում է, որ պետք է դիտարկել ներկա մարտահրավերները, օրինակ՝ տեղական մակարդակներով խնամակալության եւ հոգաբարձության մարմինների կարողությունների եւ մարդկային ռեսուրսների պակասը, կոնֆլիկտներից զերծ

³⁹ Թիվ 1642 (2009) բանաձեւ, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով, Սկզբունք 7, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17697&lang=en>:

⁴⁰ «Ո՞վ պետք է որոշում կայացնի: Մտավոր եւ հոգեւորական հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքը», Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի Յետազոտական գեկույց, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://rm.coe.int/16806da5c0>:

⁴¹ Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալություն, «Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց եւ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործունակություն», 27-32-րդ էջեր, հասանելի են հետեւյալ հղմամբ՝ <https://fra.europa.eu/en/publication/2013/legal-capacity-persons-intellectual-disabilities-and-persons-mental-health>:

խնամակալության եւ պատշաճ մոնիթորինգի թերությունները, եւ դրանց իրագործելի լուծումներ տալ:

Հաշվի առնելով «Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճռում ՄԻԵԴ-ի դիտարկումները եւ ընդհանրապես նախադեպային իրավունքը, ԵՍ չափանիշները եւ ԵՍ տարբեր անդամ պետությունների փորձը, ինչպես նաեւ կոնկրետ երկրին բնորոշ համատեքստը՝ առաջարկվում է իրականացնել համապարփակ օրենսդրական բարեփոխում Զաղաքացիական օրենսգրքում եւ Զաղաքացիական դատավարության օրենսգրքում եւ ապահովել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործունակության սահմանափակման հարմարեցված համակարգի ներդրում: Դա հնարավոր է իրականացնել գործունակության սահմանափակման մեխանիզմի շրջանակներում, ինչպես ԵՍ այլ անդամ պետություններում է: Այդ մոդելի դրական կողմերից է այն, որ գործունակության սահմանափակման հնարավորությունը կապված կլինի որոշակի իրավունքների հետ, ինչպես վերը քննարկված ԵՍ այլ անդամ պետություններում է:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործունակության սահմանափակման հարմարեցված համակարգի ստեղծումը ոչ միայն պետք է ամրագրվի օրենսդրությամբ, այլեւ արդյունավետորեն կիրառվի գործնականում: Այնուամենայնիվ, նման օրենսդրական բարեփոխման դեպքում իրավական պրակտիկայում դրա պատշաճ իրականացման համար Զաղաքացիական օրենսգրքում եւ Զաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելուց հետո անհրաժեշտ կլինի, օրինակ, ընդունել անձի մտավոր կարողությունների մակարդակի հիման վրա անհատական իրավունքների սահմանափակման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ եւ իրականացնել դատավորների եւ հոգեբուժական փորձագետների կարողությունների բարձրացման ուղղությամբ համատեղ միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն նաեւ փոխգործակցության ձեւավորմանը:

«Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճռի կատարման նպատակով խորհուրդ տրվող քայլերից զատ, առաջարկվում է հետագայում կատարելագործել ոլորտը հետեւյալ առաջարկությունների միջոցով, որոնց

համար անհրաժեշտ կլինի լրացուցիչ հետազոտություն եւ վերլուծություն իրականացնել.

- ▶ Բարեփոխման առաջին փուլում կարելի է պահպանել գործունակությունից ամբողջությամբ զրկելու մեխանիզմը: Այնուամենայնիվ, հոգեկան առողջությանն առնչվող համակարգի պատրաստված լինելուց հետո գործունակությունից մեխանիկական եղանակով զրկելու մեխանիզմը խորհուրդ է տրվում վերացնել: Դրա արդյունքում կուսումնասիրվի իրավունքներն ըստ հերթականության սահմանափակելու հարցը, առանց գործունակությունից մեխանիկական զրկելու հնարավորության :
- ▶ Օրենսդրական բարեփոխումներից հետո առաջարկվում է նաեւ աջակցության վրա հիմնված որոշումների կայացման մեխանիզմի փորձնական ներդրում: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ճիշտ գնահատել համակարգի պատրաստվածությունը եւ զարգացնել պատասխանատու մարմինների, ինչպես օրինակ՝ խնամակալության եւ հոգաբարձության մարմնի կարողությունները:

III. ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ ԵՒ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ «ՅՆԱՐԱՎՈՐԻՆՍ ՎԵՐՋԵՐՍ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ» ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ գործունակության սահմանափակումը պետք է լինի պատշաճ կերպով հիմնավորված: Սա ներառում է համոզիչ ապացույցների ներկայացում այն մասին, որ անձը չի կարող ապահովել իր սեփական կարիքները կամ վտանգ է ներկայացնում այլոց իրավունքների կամ շահերի համար⁴²: Հիմնավորումը չպետք է լինի ընդհանրական բնույթի, փոխարենն այն պետք է լինի բավականաչափ հստակ⁴³: Անկասկած, ամենակարեւոր ապացույցներից մեկը դատարանների կողմից պահանջվող՝ դատահոգեբուժական փորձագիտական եզրակացությունն է:

Այս վերլուծության շրջանակներում կարելու է տարբերակել գործունակությունն ու մտավոր կարողությունը: Գործունակությունն ու մտավոր կարողությունը տարբեր հասկացություններ են: Գործունակությունն իրավունքներ եւ պարտականություններ կրելու (դատավարական իրավունակություն) եւ այդ իրավունքներն ու պարտականություններն իրականացնելու ունակությունն է (դատավարական գործունակություն): Սա հասարակության մեջ նշանակալի մասնակցության հասանելիության բանալին է: Մտավոր կարողությունը վերաբերում է անձի կողմից որոշումներ կայացնելու հմտություններին, որոնք բնական է, որ տարբերվում են մեկ անձից մյուսը եւ կարող են տարբեր լինել տվյալ անձի համար՝ կախված բազմաթիվ գործոններից, այդ թվում՝ բնապահպանական եւ սոցիալական⁴⁴: Իրականում մտավոր կարողությունն ու գործունակությունը սերտորեն կապված են. անձի գործունակությունը որոշելիս գնահատվում է մտավոր կարողությունը:

Թեեւ դա կատարվում է դատաբժշկական փորձագետների կողմից, գործընթացում ներգրավված են այլ դերակատարներ, մասնավորապես՝ դատավորներ: Դատավորները հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի գործունակության վերաբերյալ որոշում կայացնելու համար պատասխանատու

⁴² X-ը եւ Y-ն ընդդեմ Խորվաթիայի [*X and Y v. Croatia*] (Գանգատ թիվ 5193/09, 2012 թվականի փետրվարի 3-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-107303>.

⁴³ Մ. Ս.-ն ընդդեմ Խորվաթիայի [*M.S. v. Croatia*] (Գանգատ թիվ 36337/10, 2013 թվականի ապրիլի 25-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22docname%22:%5B%22M.S.%22%5D%22%22documentcollectionid%22:%5B%22GRANDCHAMBER%22%22CHAMBER%22%22%5D%22itemid%22:%5B%22001-118736%22%22%5D%7D>:

⁴⁴ Ընդհանուր մեկնաբանություն թիվ 1 (2014) Հոդված 12՝ ՀԱԻԿ-ի՝ «Օրենքի առաջ հավասարություն», Հոդված 12, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/general-comment-no-1-article-12-equal-recognition-1>.

մարմիններն են: Գործնականում դատավորները կարող են հիմնվել դատաբժշկական փորձաքննության փորձագիտական եզրակացության վրա, սակայն այն չպետք է ծառայի որպես միակ ապացույց. ավելի շուտ, այն պետք է քննարկվի այլ ապացույցների հետ ընդհանուր համատեքստում:

Իվինովիչն ընդդեմ Խորվաթիայի [*Ivinović v. Croatia*] գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ դիմումատուին իր գործունակությունից զրկելու որոշումը մասամբ էականորեն հիմնվել է երկու հոգեբույժների կողմից կազմված եզրակացության վրա: ՄԻԵԴ-ը նշել է, որ իրազեկված է իրենց մտավոր ունակությունների խանգարումներով տառապող անձանց առնչվող բժշկական զեկույցների համապատասխանության վերաբերյալ եւ համաձայն է, որ անձի հոգեկան առողջության գնահատման վրա հիմնված ցանկացած որոշում պետք է հիմնավորվի համապատասխան բժշկական փաստաթղթերով:

Այնուամենայնիվ, տվյալ անձին եւ նրա անձնական հանգամանքներին վերաբերող համապատասխան բոլոր փաստերը պետք է գնահատի ոչ թե բժիշկը, այլ դատավորը: Դատավարությունն իրականացնող դատավորի գործառույթն է որոշել՝ արդյոք այդպիսի ծայրահեղ միջոցն անհրաժեշտ է, թե պակաս խիստ միջոցը կարող է բավարար լինել: Երբ անձի մասնավոր կյանքում այդպիսի կարեւոր շահը վտանգված է, ապա դատավորը պետք է շրջահայաց կերպով հավասարակշռի համապատասխան բոլոր գործոնները, որպեսզի կարողանա գնահատել ձեռնարկվելիք միջոցի համաչափությունը⁴⁵:

Կարեւոր է դիտարկել տվյալ անձի գործունակության վերաբերյալ որոշումներ կայացնող դատաբժշկական փորձագետների եւ դատարանների համագործակցության հարցը: Մասնավորապես, անհրաժեշտ է դիտարկել, թե ինչ հարցեր են բարձրացվել դատարանի կողմից, եւ արդյոք բժշկական փորձագիտական եզրակացության մեջ անդրադարձ կատարվում է այդ հարցերին: Սիկորան ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ գործունակությունից ցանկացած զրկում կամ գործունակության ցանկացած սահմանափակում պետք է հիմնված լինի բավականաչափ վստահելի եւ համոզիչ ապացույցների վրա: Բժշկական փորձագիտական եզրակացության մեջ պետք է բացատրվի, թե որ գործողությունները դիմումատունն չի կարողանում հասկանալ

⁴⁵ Իվինովիչն ընդդեմ Խորվաթիայի [*Ivinović v. Croatia*] (Գանգատ թիվ 13006/13, 2014 թվականի սեպտեմբերի 18-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-146393>.

կամ ղեկավարել, եւ նրա հիվանդությունն ինչ հետեւանքներ կարող է ունենալ իր սոցիալական կյանքի, առողջության, նյութական շահերի եւ այլնի վրա: Դիմումատուի անգործունակության աստիճանը պետք է բավական մանրամասն նշվի բժշկական եզրակացությունում⁴⁶:

Այնուամենայնիվ, դատավորի դերը նույնպես կարելու է եւ ազդում է բժշկական եզրակացության բովանդակության վրա: Կարելու է նաեւ, որ դատարանը բժշկական փորձագետների կողմից գննության առնչությամբ ներկայացնի վերաբերելի եւ թիրախային հարցադրում, որը հետագայում ազդեցություն կունենա տվյալ անձի գործունակության մասին որոշման վրա: Ա.Ն.-ն ընդդեմ Լիտվայի գործում ՄԻԵԴ-ը նշել է, որ բժշկին ուղղված հարցերը, դատավորի ձեւակերպմամբ, չեն վերաբերել դիմումատուի հոգեկան հիվանդության «տեսակին եւ աստիճանին»⁴⁷:

Նիկոլյանն ընդդեմ Յայաստանի [*Nikolyan v. Armenia*] գործում ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ բժշկական եզրակացության օբյեկտիվությունը պահանջում էր, որ այն պետք է լիներ «հնարավորինս վերջերս» կատարված: Ընդ որում, այն հարցը, թե՛ արդյոք բժշկական փորձաքննությունը հնարավորինս վերջերս է կատարվել, թե՛ ոչ, կախված է գործի կոնկրետ հանգամանքներից: Կոնկրետ այս գործում հոգեբուժական փորձագիտական եզրակացությունը տրվել է դիմումատուին անգործունակ ճանաչելու մասին վճռից ավելի քան տասնչորս ամիս առաջ եւ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ այդ վճիռն անփոփոխ թողնելու մասին որոշումից գրեթե մեկուկես տարի առաջ: Ուստի, ՄԻԵԴ-ը համարել է, որ այդ եզրակացությունը չի կարող համարվել «արդիական»:

Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված «Չափահաս անգործունակ անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ սկզբունքների մասին» թիվ R(99) 4 հանձնարարությունը նախատեսում է նաեւ դատավարական երաշխիքներ գործունակության սահմանափակման մասով: Մասնավորապես պետք է գոյություն ունենան համապատասխան ընթացակարգեր՝ չափահաս անձի անձնական կարողություններն ուսումնասիրելու եւ գնահատելու համար: Անգործունակ չափահաս անձի գործունակությունը սահմանափակող

⁴⁶ Սիկորան ընդդեմ Չեխիայի Հանրապետության [*Sýkora v. Czech Republic*] (Գանգատ թիվ 23419/07), 2012 թվականի Նոյեմբերի 22-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/eng/?i=001-114658>.

⁴⁷ Ա.Ն.-ն ընդդեմ Լիտվայի [*A.N. v. Lithuania*] (Գանգատ թիվ 17280/08, 2016 թվականի մայիսի 31-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/?i=002-11075>.

պաշտպանության որեւէ միջոց չպետք է ձեռնարկվի, քանի դեռ միջոցը ձեռնարկող անձը չափահասին չի տեսել կամ անձամբ բավարարված չէ չափահասի վիճակով, եւ համապատասխան որակավորում ունեցող առնվազն մեկ փորձագետի կողմից արդիական եզրակացություն չի ներկայացվել: Եզրակացությունը պետք է լինի գրավոր կամ արձանագրվի գրավոր ձեւով⁴⁸:

ԸԴՕ-ն պարունակում է հատուկ գլուխ քաղաքացուն անգործունակ եւ սահմանափակ գործունակ ճանաչելու եւ անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու մասին: Այդ դրույթների համաձայն՝ առաջին ատյանի դատարանը քաղաքացու հոգեկան խանգարման վերաբերյալ հիմնավոր կասկածների առկայության դեպքում քաղաքացուն անգործունակ ճանաչելու հիմքերի առկայությունը պարզելու նպատակով նշանակում է դատահոգեբուժական փորձաքննություն⁴⁹: Այդուհանդերձ, օրենսդրությամբ որեւէ այլ հետազա կարգավորում նախատեսված չէ: Դատավորները չունեն որեւէ ուղեցույց այն մասին, թե ինչ հարցեր պետք է ուղղվեն փորձագետներին՝ կոնկրետ գործի վերաբերյալ անհատական մոտեցում ապահովելու եւ պատշաճ ապացույցներ հավաքելու համար:

Ըստ հարցազրույցների եւ փորձագիտական քննարկումների ընթացքում հավաքագրված տեղեկությունների՝ դատավորների կողմից փորձագետներին ուղղված հարցերը հիմնականում բավականին ընդհանրական բնույթ են կրում են, երբեմն՝ նույնիսկ կրկնվող: Տպավորություն է ստեղծվում, որ անհատական մոտեցման պակաս կա: Բացակայում է նաեւ փորձագետների կողմից նախաձեռնողականությունն այն մասով, որպեսզի կարողանան տրամադրել համապարփակ վերլուծություն «տեսակի աստիճանի» եւ այն գործողությունների մասով իրականացված քննության վերաբերյալ, որոնք անձը չի կարող հասկանալ կամ ղեկավարել, եւ այն մասով, թե նրա հիվանդությունն ինչ հետեւանքներ կարող է ունենալ նրա սոցիալական կյանքի վրա, եւ այլն:

Այս գնահատման ընթացքում արձանագրված խնդիրներից մեկն էլ այն է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի գործունակության վերաբերյալ որոշում

⁴⁸ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված «Չափահաս անգործունակ անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ սկզբունքների մասին» թիվ R(99) 4 առաջարկություն, Սկզբունք 12, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://search.coe.int/cm?i=09000016805e303c>.

⁴⁹ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 252-րդ հոդվածի 1-ին կետ, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190625>.

կայացնելու ընթացակարգի շրջանակներում դատավորները հիմնականում հիմնվում են փորձագիտական եզրակացությունների վրա: Սակայն այդպես չպետք է լինի: Թեեւ փորձագիտական եզրակացությունը վճռորոշ դեր ունի գնահատման գործընթացում, դատավորները պետք է վերլուծությունը դարձնեն ավելի համապարփակ՝ այլ ապացույցներ հավաքելու եւ ընդգրկելու միջոցով: Օրինակ՝ կարելու է, որ դատարանն անձամբ լսի այն անձին, որի գործունակությունը գնահատվում է: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն, մասնավորապես՝ «Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի» գործում, ՄԻԵԴ-ը նշում է, որ դիմումատուն երկկողմ դեր է խաղացել վարույթում. նա եղել է եւ՝ շահագրգիռ կողմ, եւ՝ միեւնույն ժամանակ դատարանի կողմից իրականացվող քննության հիմնական օբյեկտը: Հետեւաբար նրա մասնակցությունն անհրաժեշտ էր ոչ միայն նրան իր սեփական գործը ներկայացնելու հնարավորություն ընձեռելու համար, այլեւ թույլ տալու համար, որ դատավորը ձեւավորեր իր անձնական կարծիքը դիմումատուի մտավոր կարողությունների վերաբերյալ:

Բացի այդ, նույն գործում ՄԻԵԴ-ը նաեւ նշել է, որ դիմումատուն իսկապես հոգեկան խանգարումների պատմություն ունեցող անձ է: Գործի կյուբերից, սակայն, պարզվում է, որ, չնայած իր հոգեկան հիվանդությանը, նա համեմատաբար ինքնուրույն մարդ է եղել: Այդպիսի հանգամանքներում անհրաժեշտ էր, որ դատավորը գոնե կարճ տեսողական կոնտակտ ունենար դիմումատուի հետ, եւ գերադասելի էր, որ հարցեր տար նրան: ՄԻԵԴ-ը եզրակացնում է, որ առանց դիմումատուին տեսնելու կամ լսելու, փաստաթղթային ապացույցների հիման վրա գործի վերաբերյալ որոշում կայացնելու դատավորի որոշումն անհիմն էր եւ հակասում էր ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված մրցակցային վարույթի սկզբունքին⁵⁰:

Հարկ է նշել, որ ԶԴՕ-ում կատարված բարեփոխումներից հետո դրանով նախատեսվում է այն անձի պարտադիր ներկայությունը, որի գործունակությունը գնահատվում է⁵¹: Այսպիսով, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի գործունակության գնահատման հետ կապված հարցերն ընդհանուր առմամբ գործնական բնույթ են կրում: Այս հարցն օրենսդրական լուծում չունի: Այդպիսի

⁵⁰ Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի [*Shtukaturov v. Russia*] (Գանգատ թիվ 44009/05, 2008 թվականի մարտի 27-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-85611>.

⁵¹ Զարդաբացիական դատավարության օրենսգիրք, 251-րդ հոդվածի 1-ին կետ, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190625>.

լուծումն ընդհանուր մոտեցման խորացման եւ անհատական մոտեցման բացակայության ռիսկեր է պարունակելու:

Ուստի գործնականում օրենսդրական դրույթների՝ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին համապատասխան իրականացումն ապահովելու նպատակով առաջարկվում է՝

- ▶ **Ընդունել մեթոդական ուղեցույցներ կամ այլ փաստաթղթեր, որոնցով դատավորներին կտրվեն համապատասխան խորհուրդներ այն մասին, թե ինչ հարցեր պետք է տրվեն դատաբժշկական փորձաքննության համար: Անհրաժեշտ է, որ այդ փաստաթղթերն ընդգրկեն այն անձի մտավոր կարողությունների վերաբերյալ դատաբժշկական փորձագետներին հարցեր ուղղելու սկզբունքները, որոնց գործունակության սահմանափակումը քննարկվում է: Դատարանի համար այդպիսի մեթոդական ուղեցույցի նպատակը կլինի բժշկական փորձագետների կողմից գննության համար այնպիսի վերաբերելի եւ թիրախային հարցադրում կատարելը, որը հետագայում ազդեցություն կունենա տվյալ անձի գործունակությանը վերաբերող որոշման վրա: Այս փաստաթղթի մեկ այլ կարեւոր մասը պետք է լինի այլ ապացույցներ (օրինակ՝ բժշկական գեկույցներ, տեղական մարմինների եզրակացություններ) հավաքելը եւ համապարփակ գնահատում իրականացնելը:**
- ▶ **Ընդունված փաստաթղթերի հիման վրա պետք է իրականացվի դատավորների եւ դատահոգեբուժական փորձագետների կարողությունների զարգացում: Ցանկալի կլիներ, որ այդպիսի վերապատրաստումը ներառվեր Արդարադատության ակադեմիայում դատավորների եւ դրանց թեկնածուների կանոնավոր վերապատրաստման ծրագրում: Առաջարկվում է դատավորների եւ դատահոգեբուժական փորձագետների խառը խմբային ուսուցումը դիտարկել որպես հնարավոր տարբերակ:**

IV. ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

Ինչպես արդեն քննարկվել է, ներպետական օրենսդրությամբ նախատեսվում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործունակության ոչ թե սահմանափակում, այլ նրանց լիովին անգործունակ ճանաչում: ԲԴՕ-ի եւ ԲՕ-ի համապատասխան կարգավորումների համաձայն՝ գործունակության վերականգնումը կարող է սկսվել անգործունակ ճանաչված անձի, նրա խնամակալի, ընտանիքի անդամի կամ հոգեբուժական կազմակերպության դիմումով: Գործունակության վերականգնումը հնարավոր է, եթե չկան անգործունակ ճանաչելու հիմքեր, եւ դա պետք է հիմնված լինի անձին գործունակ ճանաչելու վերաբերյալ դատահոգեբուժական փորձաքննության համապատասխան եզրակացության վրա: Գործունակության սահմանափակումը վերացնելու դեպքում դատարանի եզրափակիչ դատական ակտի հիման վրա վերացվում է քաղաքացու նկատմամբ սահմանված խնամակալությունը⁵²:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց դեպքում «դատարան դիմելու իրավունքի» հարցն առաջանում է մասնավորապես նրանց գործունակությունը վերականգնելու համար դատարան դիմելու ժամանակ: Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումից հետո ԲԴՕ-ում իրականացված բարեփոխումներով նախատեսվում է գործունակությունից զրկված անձի համար դատարան դիմելու հնարավորություն՝ այն վերականգնելու համար: Սա գործում է նաեւ այն անձանց համար, որոնց գործունակությունը սահմանափակված է⁵³: Այս խնդրին անդրադարձ է կատարվել նաեւ «Նիկոլյանս ընդդեմ Հայաստանի» գործով վճռում: Նախքան տվյալ վճիռն իրականացված այս բարեփոխումը համապատասխանում է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին:

Մասնավորապես «Ստանեն ընդդեմ Բուլղարիայի» [Stanev v. Bulgaria] գործով ՄԻԵԴ-ն ընդունել է, որ անձի դատավարական իրավունքների նկատմամբ սահմանափակումները, նույնիսկ այն դեպքում, երբ անձը միայն մասնակիորեն է զրկվել գործունակությունից, կարող են արդարացված լինել տվյալ անձի անձնական պաշտպանության, մյուսների շահերի պաշտպանության եւ արդարադատության

⁵² Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 255-րդ հոդվածի 1-ին կետ, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190625>.

Քաղաքացիական օրենսգիրք, 31-րդ հոդվածի 3-րդ կետ, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=186960>.

⁵³ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 255-րդ հոդվածի 2-րդ կետ, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190625>.

պատշաճ իրականացման տեսանկյունից: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ անգործունակ ճանաչելու հարցը վերանայելու խնդրանքով դատարան դիմելու իրավունքը եղել է տվյալ անձի ամենակարեւոր իրավունքներից մեկը, քանի որ նախաձեռնվելու դեպքում այդ ընթացակարգը որոշիչ կլիներ այն բոլոր իրավունքների եւ ազատությունների իրականացման համար, որոնց վրա ազդեցություն է ունեցել անգործունակ ճանաչելու փաստը, ՄԻԵԴ-ը համարել է, որ այս իրավունքն այն անձանց պաշտպանության համար հիմնարար դատավարական իրավունքներից մեկն է, որոնք մասնակիորեն զրկվել են գործունակությունից:

Ավելին, ՄԻԵԴ-ն ընդգծել է, որ, հաշվի առնելով վերոգրյալը, մասնավորապես՝ ազգային օրենսդրության մեջ եւ համապատասխան միջազգային փաստաթղթերում ի հայտ եկած միտումները, ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասը պետք է մեկնաբանվի այնպես, որ սկզբունքորեն երաշխավորվի, որ յուրաքանչյուր ոք, ով ճանաչվել է մասնակի անգործունակ, անմիջական հասանելիություն ունենա դատարանին՝ իր գործունակությունը վերականգնելու նպատակով: ՄԻԵԴ-ը նշել է, որ Եվրոպայի խորհրդի քսան անդամ պետությունների ներպետական իրավունքի համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործերի ճնշող մեծամասնությունում (Խորվաթիա, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Զուլաստան, Զուլգարիա, Լյուքսեմբուրգ, Մոնակո, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա, Շվեդիա, Շվեյցարիա եւ Թուրքիա) օրենքը գործունակությունից զրկված ցանկացած անձի իրավունք է տալիս անմիջականորեն դատարան դիմելու՝ պաշտպանության միջոցի կիրառումը դադարեցնելու համար: Այսպիսով, դատարանը որոշ չափով բացարձակ է համարել անգործունակ ճանաչված անձանց՝ իրենց գործունակությունը վերականգնելու համար դատարան դիմելու իրավունքը:

Տվյալ գործում դիմումատուն, որը մասամբ զրկվել էր գործունակությունից, պնդել է, որ Բուլղարիայի օրենսդրությունը թույլ չի տալիս իրեն անմիջականորեն դիմել դատարան՝ իր գործունակությունը վերականգնելու հարցով: ՄԻԵԴ-ը կարևոր է համարել հստակեցնել, որ գործունակության վերականգնման վերաբերյալ վարույթներն ուղղակիորեն վճռորոշ են «քաղաքացիական իրավունքները եւ պարտականությունները» որոշելիս. այսինքն՝ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է այդ դեպքերում: ՄԻԵԴ-ը նկատել է, որ այնքանով, որքանով խոսքը վերաբերում է դատարան դիմելուն, ներպետական օրենսդրությունը որեւէ

տարբերակում չի դնում այն անձանց միջեւ, որոնք գործունակությունից զրկված են ամբողջությամբ, եւ այն անձանց միջեւ, որոնք, ինչպես եւ դիմումատուն, գործունակությունից զրկված են միայն մասամբ: Ավելին, ներպետական օրենսդրությունը չէր նախատեսում ինքնաբերաբար պարբերաբար վերանայել այն հարցը, թե արդյոք անձի նկատմամբ խնամակալություն սահմանելու հիմքերը շարունակում են վավեր լինել: Եվ վերջապես, դիմումատուի դեպքում խնդրո առարկա միջոցը չուներ ժամանակային սահմանափակում: Հետեւաբար ՄԻԵԴ-ը համարել է, որ այս կոնկրետ գործում տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում⁵⁴:

Մեկ այլ կարեւոր քայլ էր երկու խմբերին անվճար իրավաբանական օգնության տրամադրումը՝ իրենց գործունակությունը վերականգնելու համար: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ընդգծել, որ քննարկվող խմբերը բացակայում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի⁵⁵ անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց ցուցակից: Վիճակագրական տվյալների եւ ներպետական դատական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս մեխանիզմը գործնականում անարդյունավետ է: Դա կարող է կապված լինել, օրինակ, անգործունակ ճանաչված անձանց ոչ պատշաճ ծանուցման հետ: Սա կարող է կապված լինել երկու հիմնական հարցերի հետ՝ անգործունակ ճանաչված անձանց եւ նրանց խնամակալների անտեղյակություն եւ կոնֆլիկտներից զերծ խնամակալության բացակայություն, երբ խնամակալները շահագրգռված չեն լինի անձի գործունակության վերականգնմամբ:

Այս շրջանակներում Լեհաստանի փորձը կարող է օգտակար լինել: Մասնավորապես Լեհաստանի օրենսդրության համաձայն՝ դատարանն ի պաշտոնե փաստաբան է նշանակում այն անձի համար, որին անմիջականորեն վերաբերում է վարույթը, նույնիսկ եթե նա չի դիմել փաստաբանի համար, եթե այդ անձն ի վիճակի չէ դիմելու փաստաբանի համար՝ ելնելով իր հոգեկան առողջությունից, եւ դատարանը փաստաբանի մասնակցությունը վարույթին գնահատում է անհրաժեշտ: Ի պաշտոնե փաստաբան է նշանակվում նաեւ հոգեբուժարան կամ սոցիալական խնամքի հաստատություն ընդունված անձի

⁵⁴ Ստանեն ընդդեմ Բուլղարիայի [Stanev v. Bulgaria] (Գանգատ թիվ 36760/06), 2012 թվականի հունվարի 17-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/?i=002-129>.

⁵⁵ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 41-րդ հոդվածի 5-րդ կետ, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=186162>.

համար՝ առանց նրա համաձայնության⁵⁶:

Բացի վերելում նկարագրված տարբերակից՝ գոյություն չունի այլ ընթացակարգ, որով հնարավոր է վերականգնել անգործունակ ճանաչված կամ գործունակությունը սահմանափակված անձի գործունակությունը: Ներպետական օրենսդրությամբ նախատեսված չէ անգործունակ ճանաչված անձի գործունակության կամ նրա կարողության վերանայում՝ ողջամիտ պարբերականությամբ: Ավելին, օրենսդրությամբ դատարանները պարտավոր չեն իրենց որոշումներով սահմանել գործունակությունը սահմանափակելու կամ դրանից զրկելու ժամկետ: Դա ծայրաստիճան հակասում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի իրավունքները սահմանափակող պաշտպանության միջոցների սահմանափակ եւ անհրաժեշտ ժամկետի կիրառման կարելուր սկզբունքին:

Մասնավորապես Նատալյա Միխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի գործով ՄԻԵԴ-ը քննադատել է, որ ներպետական օրենսդրությունը երաշխիքներ չի նախատեսում առ այն, որ գործունակության վերականգնման հարցը դատարանի կողմից պետք է վերանայվի ողջամիտ ընդմիջումներով: Տվյալ դեպքում Դատարանը նշել է, որ դիմումատուի՝ իր գործունակությունը վերականգնելու անկարողությունն ուղղակիորեն հանգեցրել է նրան, որ այդ հարցը դատարանների կողմից չի քննվել: Այդ հարցի դատական վերանայման բացակայությունը, որը լրջորեն ազդել է դիմումատուի կյանքի բազմաթիվ ասպեկտների վրա, չէր կարող արդարացվել անգործունակ ճանաչված անձանց դատարան դիմելու իրավունքի սահմանափակումների հիմքում ընկած իրավաչափ նպատակներով: Սույն գործի փաստերը Դատարանին ստիպում են եզրակացնել, որ այն իրավիճակը, որում հայտնվել է դիմումատուն, հավասարազոր է արդարադատության ժխտման՝ կապված նրա գործունակության վերանայման գործընթացն ապահովելու հնարավորության հետ: Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում⁵⁷:

Այս վճռից հետո, ինչպես նկարագրված է Նատալյա Միխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի գործի վերաբերյալ Ուկրաինայի իշխանությունների կողմից

⁵⁶ Կեյ.Սի.-ն եւ Կեդզիորն ընդդեմ Լեհաստանի [*K.C. and Kedzior v. Poland*] (Գանգատ թիվ 31199/12, 45026/07) գործով Գործողությունների վերաբերյալ զեկույց (2018 թվականի մայիսի 28), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ [https://hudoc.exec.coe.int/?i=DH-DD\(2018\)332-revE](https://hudoc.exec.coe.int/?i=DH-DD(2018)332-revE).

⁵⁷ «Նատալյա Միխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի» [*Nataliya Mikhaylenko v. Ukraine*] (Գանգատ թիվ 49069/11, 2013 թվականի օգոստոսի 30-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-119975>.

ներկայացված գործողությունների վերաբերյալ գեկույցում, Ուկրաինայի սոցիալական քաղաքականության նախարարության պահանջով Ուկրաինայի արդարադատության նախարարությունը համապատասխան մարմիններին եւ դատարաններին բացատրական հայտարարություն է տրամադրել Ուկրաինայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածի կիրառության վերաբերյալ: Սույն հայտարարության համաձայն՝ ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու մասին որոշման գործողության ժամկետը սահմանում է դատարանը, սակայն այն չի կարող գերազանցել երկու տարի ժամկետը: Այսպիսով, ֆիզիկական անձին անգործունակ ճանաչելու ժամկետն ավարտվում է դատարանի որոշմամբ անձին անգործունակ ճանաչելու ժամկետը լրանալու հաջորդ օրը: Դատարանի որոշումն այդպիսի դեպքերում համարվելու է իրավունք սահմանող փաստաթուղթ⁵⁸: Գործողությունների այս գեկույցից հետո ՆԿ-ն փակել է սույն գործի քննությունը⁵⁹:

Համաձայն *Դ.Դ.-ն ընդդեմ Լիտվայի* գործով Գործողությունների վերաբերյալ գեկույցի՝ Լիտվայում անգործունակ ճանաչելու գործընթացը կարգավորող եւ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները պաշտպանող իրավական դաշտը բարեփոխվել է 2016 թվականին, ի թիվս այլնի, Զաղաքացիական օրենսգրքում, Զաղաքացիական դատավարության օրենսգրքում եւ «Պետության կողմից երաշխավորված իրավաբանական օգնության մասին» օրենքում կատարված փոփոխություններով, որոնք, ի թիվս այլնի, դատարաններին պարտավորեցնում են անձի առողջական վիճակի բարելավման դեպքում վերականգնել նրա գործունակությունը, այնպես, որ լրիվ անգործունակ ճանաչելը դիտարկվի որպես միայն ծայրահեղ միջոց: Որոշակի ոլորտում անձին անգործունակ ճանաչելու համար դիմում կարող են ներկայացնել նրա ամուսինը, ծնողները կամ չափահաս երեխաները, ինչպես նաև հաստատությունը կամ դատախազը, որը կարող է դատարանից նաեւ պահանջել վերականգնել գործունակությունը: Գործունակության վերականգնման մասին այդպիսի դիմումները կարող են ներկայացվել ոչ ավելի, քան տարին մեկ անգամ, եւ հենց անգործունակ ճանաչված անձի կողմից: Այդպիսի դիմում կարող է ներկայացնել նաեւ Անգործունակ ճանաչված անձանց առնչվող հարցերի վերանայման

⁵⁸ «Նատալյա Միխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի» [*Nataliya Mikhaylenko v. Ukraine*] (Գանգատ թիվ 49069/11) գործով Գործողությունների վերաբերյալ գեկույց (2008 թվականի օգոստոսի 8), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ [https://hudoc.exec.coe.int/eng/?i=DH-DD\(2019\)896E](https://hudoc.exec.coe.int/eng/?i=DH-DD(2019)896E).

⁵⁹ CM/ResDH(2019)324 բանաձեւ, Նատալյա Միխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի գործի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի կատարում, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.exec.coe.int/eng/?i=001-199603>.

հանձնաժողովը՝ նոր անկախ մարմին, որը կստեղծվի յուրաքանչյուր համայնքում: Փոփոխված Զախաքացիական օրենսգիրքը նաեւ հնարավորություն է տալիս բողոքարկելու ինսամակալի գործողությունները եւ նախաձեռնելու վարույթ՝ նրան իր պաշտոնից ազատելու համար⁶⁰: ՆԿ-ն որոշեց փակել այս գործի քննությունը⁶¹:

Չափազանց հաճախակի ներկայացվող դիմումների հետ կապված խնդիրները չպետք է լուծվեն դիմելու հնարավորությունն ամբողջությամբ մերժելու միջոցով: Փոխարենը որոշակի ժամկետներում ներկայացվող բողոքների թիվը կարող է սահմանափակվել⁶²: Եռամյա ժամկետի կիրառումը, որի ընթացքում գործունակությունը վերականգնելու մասին որեւէ դիմում չի կարող ներկայացվել, Դատարանը, այնուամենայնիվ, չափազանց սահմանափակող է համարել⁶³: Այսպիսով, սա նշանակում է, որ այն անձինք, որոնց նկատմամբ ինսամակալություն է սահմանվել, պետք է նաեւ պահպանեն ողջամիտ ժամկետում իրենց ամբողջական գործունակությունը վերականգնելու համար դիմելու իրավունակությունը:

Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված «Չափահաս անգործունակ անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ սկզբունքների մասին» թիվ Rec (99)4 հանձնարարությամբ նշվում է գործունակության վերականգնման կարելորդության մասին՝ դրա հիմքերի բացակայության դեպքում: Մասնավորապես, այն սահմանում է, որ պաշտպանության միջոցները պետք է լինեն սահմանափակ ժամկետով, երբ դա հնարավոր է եւ տեղին: Պետք է ուշադրություն դարձնել պարբերական վերանայումների ինստիտուտին: Պաշտպանության միջոցները պետք է վերանայվեն ըստ հանգամանքների փոփոխման, հատկապես՝ չափահասի դեպքում: Դրանք պետք է դադարեցվեն, եթե դրանց պայմաններն այլեւս չեն բավարարվում⁶⁴:

⁶⁰ Դ.Դ.-ն ընդդեմ Լիտվայի [*D.D. v. Lithuania*] (Գանգատ թիվ 13469/06) գործով Գործողությունների վերաբերյալ զեկույց (2020 թվականի հունվարի 13), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ [https://hudoc.exec.coe.int/?i=DH-DD\(2020\)145E](https://hudoc.exec.coe.int/?i=DH-DD(2020)145E)).

⁶¹ CM/ResDH(2020)267 բանաձեւ, Դ.Դ.-ն ընդդեմ Լիտվայի [*D.D. v. Lithuania*] գործի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի կատարում, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.exec.coe.int/?i=001-206922>.

⁶² Ստանեն ընդդեմ Բուլղարիայի [*Stanev v. Bulgaria*] (Գանգատ թիվ 36760/06), 2012 թվականի հունվարի 17-ի վճիռ, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/?i=002-129>.

⁶³ Բերկովան ընդդեմ Սլովակիայի [*Berková v. Slovakia*] (Գանգատ թիվ 67149/01, 2009 թվականի հունիսի 24-ի վճիռ), հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://hudoc.echr.coe.int/rus?i=001-91802>.

⁶⁴ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված «Չափահաս անգործունակ անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ սկզբունքների մասին» թիվ Rec (99)4 առաջարկություն, Սկզբունք 14, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e303c.

Նշված առաջարկության բացատրական զեկույցում խորհուրդ է տրվում, որ պաշտպանության միջոցները չսահմանվեն անորոշ տեւողությամբ, եթե դա անհրաժեշտ կամ տեղին չէ տվյալ չափահաս անձի շահերից ելնելով, օրինակ, երբ ներկայացուցչի նշանակման կարիք ունեցող չափահաս անձը տառապում է ծերունական դեմենսիայով, որից վերականգնման հնարավորությունն չկա: Պետք է ուշադրություն դարձնել պաշտպանության ցանկացած միջոցի պարբերական վերանայման ինստիտուտին, քանի դեռ պաշտպանության միջոցը սահմանված կարճ տեւողություն չունի: Այդպիսի վերանայման պարբերականությունը կարող է սահմանվել, օրինակ, պաշտպանության միջոց սահմանող մարմնի կողմից: Ազգային օրենսդրությամբ պետք է որոշվեն այն անձինք, ովքեր իրավունք ունեն պահանջելու վերանայել պաշտպանության միջոցները: Այս առումով տվյալ չափահաս անձը պետք է իրավունք ունենա պահանջելու այդպիսի վերանայում:

Չափի առնելով սույն հանձնարարականի մոտեցումը, որով ընդունվում է, որ կարող են լինել անգործունակության տարբեր աստիճաններ, այդ անգործունակությունը կարող է ժամանակ առ ժամանակ տարբերվել, եւ հետեւաբար պաշտպանության ցանկացած միջոց պետք է կարգավորվի տվյալ չափահաս անձի գործունակությունն առավելագույնս պահպանելու գաղափարով. հանգամանքների ցանկացած փոփոխություն եւ առաջին հերթին, չափահաս անձի վիճակի փոփոխությունը պետք է հանգեցնի պաշտպանության միջոցների վերանայման: Չանգամանքների համապատասխան փոփոխությունները, բացի չափահաս անձի վիճակի փոփոխություններից, կարող են ներառել, օրինակ, չափահաս անձի կողմից գույքի ժառանգումը կամ չափահաս անձի բնակության վայրի փոփոխությունները: Բացի այդ, եթե պաշտպանության միջոց սահմանելու վերաբերյալ որոշման պայմաններն այլեւս չեն բավարարվում, ապա այդ միջոցը պետք է դադարեցվի⁶⁵:

Անդամ պետությունները տարբեր մոտեցումներ ունեն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի գործունակության սահմանափակման ժամկետի սահմանման հարցի վերաբերյալ: Օրինակ՝ Ուկրաինայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ վճռի վավերականության ժամկետը որոշվում է դատարանի կողմից,

⁶⁵ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված «Չափահաս անգործունակ անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ սկզբունքների մասին» թիվ Rec (99)4 առաջարկության Բացատրական զեկույց, 56-րդ եւ 57-րդ պարբերություններ, հասանելի են հետեւյալ հղմամբ՝ <https://rm.coe.int/09000016805e302a>.

սակայն չի կարող գերազանցել երկու տարի ժամկետը: Անձին անգործունակ ճանաչելու մասին վճռի վավերականության ժամկետը երկարաձգելու մասին միջնորդությունը պետք է ներկայացնի ինսամակալը, ինսամակալության մարմնի ներկայացուցիչը՝ ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օր առաջ: Վավերականության ժամկետի երկարաձգման մասին միջնորդությունը պետք է պարունակի այնպիսի հանգամանքներ, որոնք վկայում են խրոնիկ, տեւական հոգեկան խանգարման շարունակության մասին, որի հետեւանքով անձը շարունակում է անտեղյակ լինել իր գործողությունների նշանակության մասին եւ (կամ) չի կարողանում ղեկավարել դրանք, եւ պետք է հաստատված լինի դատահոգեբուժական փորձաքննության եզրակացությամբ⁶⁶:

Չեխիայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ դատարանը որոշակի հարցի կապակցությամբ գործունակությունը կարող է սահմանափակել այդ հարցի լուծմանն ընթացք տալու համար անհրաժեշտ ժամկետով կամ այլ կերպ սահմանված՝ երեք տարին չգերազանցող որոշակի ժամկետով. սահմանափակման իրավական հետեւանքները դադարում են այդ ժամկետը լրանալուց հետո: Այնուամենայնիվ, եթե այս ժամկետում նախաձեռնվում է սահմանափակման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ վարույթ, ապա սկզբնական որոշման իրավական հետեւանքները շարունակում են ուժի մեջ մնալ մինչեւ նոր որոշում կայացնելը, սակայն ոչ ավելի, քան մեկ տարի: Հանգամանքների փոփոխության դեպքում դատարանը, նույնիսկ իր նախաձեռնությամբ, պետք է անհապաղ փոխի կամ չեղարկի իր որոշումը⁶⁷:

Վրաստանի քաղաքացիական օրենսգրքով սահմանվում է, որ գործունակության սահմանափակումը դադարում է, երբ այլեւս չկան անձի գործունակության սահմանափակման հիմքերը⁶⁸: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ այդպիսի դեպքում դատարանը կայացնում է վճիռ՝ հենց քաղաքացու, նրա ինսամակալի կամ ընտանիքի անդամի դիմումի հիման վրա քաղաքացուն սահմանափակ գործունակ ճանաչելու մասին որոշումը չեղարկելու վերաբերյալ⁶⁹:

⁶⁶ Ուկրաինայի Քաղաքացիական դատավարության օրենսգրք, 300-րդ հոդված, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://zakon.rada.gov.ua/laws/show/en/1618-15#Text>.

⁶⁷ Չեխիայի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրք, 59-րդ եւ 60-րդ բաժիններ, հասանելի են հետեւյալ հղմամբ՝ <http://obcanskyzakonik.justice.cz/images/pdf/Civil-Code.pdf>.

⁶⁸ Վրաստանի քաղաքացիական օրենսգրք, 14-րդ հոդվածի 3-րդ կետ, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://matsne.gov.ge/en/document/view/31702?publication=129>.

⁶⁹ Վրաստանի քաղաքացիական դատավարության օրենսգրք, 327-րդ հոդվածի 1-ին կետ, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://matsne.gov.ge/en/document/download/29962/92/en/pdf>.

Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալության «Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց եւ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործունակություն» փաստաթղթի ուսումնասիրությունն ի ցույց է դնում այս հարցի հետ կապված՝ ավելի շատ կոնկրետ երկրին բնորոշ փորձ⁷⁰:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի իրավունքի նկատմամբ կատարվող միջամտությունը նրա գործունակության սահմանափակման միջոցով իրականացվում է պետության, այսինքն՝ դատարանների կողմից: Իշխանությունների պոզիտիվ պարտավորությունն է պետության կողմից տրամադրվող բուժման արդյունքում տվյալ անձի հոգեկան առողջության վիճակի դինամիկային ուշադիր հետեւելը եւ գործունակության որոշ սահմանափակումներ վերացնելու կամ գործունակությունն ամբողջությամբ վերականգնելու հնարավորությունը գնահատելը: Այդպիսի պարտականություն կրելու կարելորդությունն էական է խնամակալության համակարգի անարդյունավետության եւ խնամակալների շահերի ենթադրյալ բախման պայմաններում: Այդպիսի պայմաններում խնամակալները կարող են շահագրգռված չլինել գործունակությունը վերանայելու հարցում:

Ելնելով վերը ներկայացված բացահայտումներից եւ «Նիկոլյան ընդդեմ Հայաստանի» գործով վճռի կատարման նպատակով առաջարկվում է ԶԴՕ-ում սահմանել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի գործունակության սահմանափակման առավելագույն տեւողությունն եւ դատարանների՝ գործունակության սահմանափակման կամ գործունակությունից զրկելու տեւողությունն նախատեսելու եւ առավելագույն տեւողությունը սահմանելու պարտավորություն: Սա պետք է հիմնված լինի նաեւ դատահոգեբուժական փորձագետի տրամադրած եզրակացության վրա: Բոլոր դեպքերում գործունակության հարցի վերանայման գործընթացում պետք է ներառվի դատահոգեբուժական փորձաքննության, բժշկական պատմության ուսումնասիրության եւ այլ հետազոտությունների նշանակում:

Ավելին, այս շրջանակում կարող է սահմանվել դատարանի կողմից

⁷⁰ Եվրոպական միության Հիմնարար իրավունքների գործակալություն, «Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց եւ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործունակություն», 37-39-րդ էջեր, հասանելի են հետեւյալ հղմամբ՝ <https://fra.europa.eu/en/publication/2013/legal-capacity-persons-intellectual-disabilities-and-persons-mental-health>.

իրականացվող վերահսկողության մեխանիզմ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող այն անձի բուժման նկատմամբ, որի գործունակությունը սահմանափակվել է, եւ նրա գործունակությունը կարող է վերականգնվել այն ժամանակ, երբ այդ սահմանափակումների հիմքերը դադարեն գոյություն ունենալուց: Կարող է ներդրվել բուժում իրականացնող հաստատությունների եւ խնամակալության ու հոգաբարձության մարմնի կողմից հաշվետվություններ ներկայացնելու մեխանիզմ:

V. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՒ ՀՈԳԱՔԱՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հաջորդ հարցը, որին ՄԻԵԴ-ն անդրադարձել է «Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճռում, վերաբերում էր խնամակալության եւ հոգաբարձության համակարգի արդյունավետությանը: Մասնավորապես վճռում արձանագրվել է, որ հաշվի չեն առնվել դիմումատուի՝ որպես խնամարկյալի եւ նրա որդու՝ որպես խնամակալի միջեւ առկա տարաձայնությունները, ինչպես նաեւ վերջինիս անաչառության եւ ներպետական դատարանի կողմից ոչ պատշաճ քննություն իրականացրած լինելու կասկածը, թեեւ դիմումատուն ինքն էր դիմել խնամակալին փոխելու հարցով: Ավելին, խնդիրը քննարկվել էր նաեւ ընդհանուր միջոցի համատեքստում:

Հետեւաբար այս վերլուծության ամբողջականությունն ապահովելու համար անհրաժեշտ է անդրադառնալ խնամակալության եւ հոգաբարձության համակարգի արդյունավետությանը եւ արդյունավետ ու գործուն մեխանիզմների անհրաժեշտությանը, որպեսզի հնարավոր լինի բացառել շահերի հնարավոր բախումն այն անձի միջեւ, որի գործունակությունը սահմանափակվել է, եւ խնամակալի միջեւ: Այս համատեքստում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել խնամակալության եւ հոգաբարձության մարմնի կողմից անգործունակ ճանաչված անձին լսելուն եւ այդ մարմնի կայացրած որոշումը դատարանում բողոքարկելու իրավունքին:

ԶՕ-ի համաձայն՝ հոգեկան հիվանդության հետեւանքով դատարանի կողմից անգործունակ ճանաչված անձանց նկատմամբ սահմանվում է խնամակալություն: Դատարանն անձին անգործունակ ճանաչելու կամ նրա գործունակությունը սահմանափակելու մասին եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երեք օրվա ընթացքում, ուղարկում է քաղաքացու բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմին՝ նրա նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու համար: Խնամակալ կամ հոգաբարձու նշանակում է խնամակալության ու հոգաբարձության կարիք ունեցող անձի բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմինը՝ մեկ ամսվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ նշված մարմնին հայտնի է դարձել քաղաքացու նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու անհրաժեշտությունը: Խնամակալության կամ հոգաբարձության կարիք ունեցող անձի նկատմամբ մինչեւ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը խնամակալի կամ հոգաբարձուի պարտականություններն իրականացնում է

խնամակալության եւ հոգաբարձության մարմինը⁷¹: Համայնքի ղեկավարն օժտված է խնամակալություն եւ հոգաբարձություն սահմանելու լիազորությամբ⁷²: Այլ կերպ ասած՝ համայնքի ղեկավարներն իրականացնում են խնամակալության եւ հոգաբարձության մարմինների լիազորություններ: Երեւանում այդ լիազորություններն իրականացնում են Երեւան քաղաքի վարչական շրջանների ղեկավարները:

Խնամակալության եւ հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում է խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողով, որը խորհրդակցական մարմին է եւ գործում է հասարակական հիմունքներով: Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել երեքից մինչեւ ինն անձ: Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել մարզպետարանների (Երեւանում՝ Երեւանի քաղաքապետարանի) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, տարածքային կենտրոնների աշխատողներ, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ, բուժաշխատողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ եւ իրավաբաններ, Ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողներ, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ)⁷³:

Խնամակալության եւ հոգաբարձության մարմնի գործառույթներում ներառված է խնամակալների եւ հոգաբարձուների գործողությունների նկատմամբ հսկողությունը, այդ թվում՝ խնամակալների եւ հոգաբարձուների գործողությունների կամ անգործության մասին դիմումներն ու բողոքները քննության առնելը: Ավելին, խնամակալության եւ հոգաբարձության մարմինը նաեւ կարող է խնամակալին կամ հոգաբարձուին ազատել իր պարտականությունների կատարումից: Պատճառների շարքում կանոնադրությամբ սահմանված են

⁷¹ Քաղաքացիական օրենսգիրք, 34-րդ հոդվածի 1-ին կետ, 36-րդ հոդվածի 2-րդ կետ եւ 37-րդ հոդվածի 1-ին կետ, հասանելի են հետեւյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=186960>.

Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 254-րդ հոդվածի 2-րդ կետ, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190625>.

⁷² «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» օրենք, 36-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետ, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=193167>.

⁷³ Քաղաքացիական օրենսգիրք, 37-րդ հոդվածի 1-ին կետ, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=186960>.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության եւ հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 631-Ն որոշում, 11-րդ, 12-րդ եւ 14-րդ կետեր, հասանելի են հետեւյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152354>.

խնամակալի կամ հոգաբարձուի կողմից իր պարտականություններն անպատշաճ կատարելու, ներառյալ՝ խնամակալությունը կամ հոգաբարձությունը շահադիտական նպատակներով օգտագործելու կամ խնամարկյալին առանց հսկողության եւ անհրաժեշտ օգնության թողնելու դեպքերը՝ միաժամանակ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով նրան օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու համար: Այն խնամակալին թույլ է տալիս կնքել անգործունակ ճանաչված անձի գույքի հետ կապված գործարքներ, ինչպես նաեւ օգնություն է տրամադրում՝ կապված նրա բուժման եւ հանգստի կազմակերպման հետ⁷⁴:

Հիմնվելով Կառավարության՝ «խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» որոշման վրա՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը հաստատել է խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցը: Ուղեցույցի նպատակն է գործնական օգնություն տրամադրել խնամակալության և հոգաբարձության մարմիններին՝ օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում ապահովելու երեխաների, ինչպես նաև անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Այնուամենայնիվ, մեթոդական ուղեցույցում նախատեսված չեն մանրամասն ցուցումներ անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց իրավունքների պաշտպանության համար. դրանում շեշտն ավելի շատ դրվում է երեխաների վրա⁷⁵:

«Անգործունակ անձանց համար արդարադատության մատչելիության եւ ազգային դատարանների որոշումների չկատարման կամ ուշ կատարման մասին» զեկույցում մանրամասն վերլուծության են ենթարկվել խնամակալության եւ հոգաբարձության մարմնի իրավական կարգավիճակը եւ խնամակալ նշանակելու վերաբերյալ իրավական ակտի, որոշման տեսակը: Այս համատեքստում պետք է հղում կատարել Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0477/05/15 որոշմանը⁷⁶: Անդրադառնալով

⁷⁴ Նույն տեղում, 9-րդ կետ:

⁷⁵ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի հունիսի 31-ի «խնամակալության եւ հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 12-Ա/1 հրաման, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.irtek.am/views/act.aspx?aid=96439>.

⁷⁶ Վճռաբեկ դատարանի 2016 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ ՎԴ/0477/05/15 որոշում, հասանելի

խնամակալության եւ հոգաբարձության մարմնի կողմից անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու որոշման բնույթին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն վարչական ակտ է: Ուստի անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին խնամակալության եւ հոգաբարձության մարմնի որոշումը՝ որպես վարչական ակտ, ենթակա է բողոքարկման՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Խնամակալության եւ հոգաբարձության մարմնի որոշումը բողոքարկելու հնարավորությունը նախատեսված է ԶՕ-ով եւ խնամակալության եւ հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ⁷⁷:

Իր որոշման մեջ Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է ԶՕ դրույթները: Մասնավորապես, դատարանը նաեւ նշել է, որ նշված ընթացակարգը հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց պահանջել խնամակալի փոփոխություն: Դատարանը գտել էր, որ ենթակա է պարզաբանման այն հարցը, թե արդյոք անգործունակ ճանաչված անձը ներառված է Քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված շահագրգիռ անձանց շրջանակում, որոնք կարող են նախաձեռնել խնամակալության որոշման դատական բողոքարկում, թե՛ ոչ: Վճռաբեկ դատարանը որոշել էր, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող, անգործունակ ճանաչված անձը պետք է ունենա անձամբ լսվելու հնարավորություն՝ անգործունակ ճանաչվելու հետեւանքով իր նկատմամբ խնամակալություն սահմանելու վերաբերյալ գործերով՝ իր տեսակետն արտահայտելու համար, քանի որ նշված որոշման կայացումը վերջինիս համար ոչ պակաս կարեւոր է՝ հաշվի առնելով, որ իր իրավունքների եւ շահերի պաշտպանությունն այլեւս պետք է իրականացվի բացառապես խնամակալի միջոցով: Ուստի Վճռաբեկ դատարանը որոշել էր, որ անգործունակ ճանաչված անձը ոչ միայն պետք է ունենա խնամակալ նշանակելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու իրավունք, այլ նաեւ պետք է ունենա դատական քննությանը լիարժեք մասնակցելու եւ իր իրավունքներն իրացնելու հնարավորություն⁷⁸:

Է հետեւյալ հղմամբ՝ https://iravaban.net/wp-content/uploads/2016/10/VD-0477-05-15-ANGORCUNAK-mijankyal.pdf?fbclid=IwAR2I7pusZdVd8KGe8BSmhHvEg358sRtnaD_ssiIDKxgEwM09vCmb9d5IISs.

⁷⁷ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի «Խնամակալության եւ հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 631-Ն որոշում, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152354>.

⁷⁸ Վճռաբեկ դատարանի 2016 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ ՎԴ/0477/05/15 որոշում, հասանելի է հետեւյալ հղմամբ՝ <https://iravaban.net/wp-content/uploads/2016/10/VD-0477-05-15->

Նշված եզրակացությունից հետո անհրաժեշտ է քննարկել, թե արդյոք վարչական դատավարության օրենսդրությամբ նախատեսված են Վճռաբեկ դատարանի այս իրավական դիրքորոշումն ապահովելու համար պահանջվող կարգավորումները: Վարչական դատավարության օրենսգրքի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավունք ունի դիմելու վարչական դատարան: Դատավարական իրավունքներ ունենալու եւ դատավարական պարտականություններ կրելու ունակությունը (դատավարական իրավունակություն) ճանաչվում է բոլոր ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար՝ հավասար չափով: Այնուամենայնիվ, օրենսգրքով նաեւ ամրագրված է, որ անգործունակ ճանաչված անձանց իրավունքները եւ ազատությունները դատավարությունում ներկայացնում են նրանց ինսամակալները: Գործի քննության ընթացքում սահմանափակ գործունակ ճանաչված անձինք լսվելու իրավունք ունեն: Դատարանը կարող է անգործունակ ճանաչված անձին ընձեռել գործի քննության ընթացքում լսվելու իրավունք⁷⁹:

Ստացվում է, որ թեեւ անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձը տեսականորեն կարող է ինքնուրույն դիմել վարչական դատարան եւ վիճարկել ինսամակալության եւ հոգաբարձության մարմնի որոշումը, այնուամենայնիվ, չունենալով իրավունակություն եւ գործունակություն նրա իրավունքներն ու ազատությունները դատավարության ընթացքում կներկայացվեն օրինական ներկայացուցչի կողմից: Այլ կերպ ասած, եթե անգործունակ ճանաչված անձը ինսամակալ նշանակելու մասին որոշումը բողոքարկում է, օրինակ, իր եւ ինսամակալի շահերի բախման հիմքով, ապա նրան դատարանում ներկայացնում է նրա օրինական ներկայացուցիչը՝ հենց ինսամակալը:

Միջազգային չափանիշների համաձայն՝ անգործունակ ճանաչված անձանց համար կոնֆլիկտներից զերծ ինսամակալության երաշխավորումը եւ պատշաճ մշտադիտարկումն ու վերահսկողությունը պետք է լինեն ինսամակալության մարմինների հիմնական գործառույթների շարքում: Այս գործառույթը պետք է ապահովի օրենսդրությամբ եւ պատշաճ կերպով իրականացվի գործնականում: Ընդգծվում է նաեւ պատշաճ ներգրավվածության կարեւորությունը եւ այն անձին

[ANGORCUNAK-mijankyal.pdf?fbclid=IwAR2I7pusZdVd8KGe8BSmhHvEg358sRtnaD_ssiIDKxgEwM09vCmb9d5IISs.](https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193219)

⁷⁹ Վարչական դատավարության օրենսգրքը, 3-րդ հոդվածի 1-ին կետ եւ 4-րդ հոդվածի 1-ին, 6-րդ եւ 7-րդ կետեր, հասանելի են <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193219> հետեւյալ հղմամբ՝

դիմելու իրավունքը, որի նկատմամբ խնամակալ է նշանակվելու:

Ն.-ն ընդդեմ Ռումինիայի [*N. v. Romania*] գործով (թիվ 2) վճռում ՄԻԵԴ-ը համարել է, որ դիմումատուի օրինական խնամակալի փոփոխության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացը չի ուղեկցվել համապատասխան երաշխիքներով: Դիմումատուին թույլ չի տրվել մասնակցել վարույթին միայն այն պատճառով, որ նրա նկատմամբ խնամակալություն է սահմանված եղել: Որեւէ կերպ ուշադրություն չի դարձվել նրա՝ հարցը հասկանալու եւ իր նախընտրություններն արտահայտելու կարողությանը: Ընդ որում, փոփոխություն կատարելու պատճառն անբավարար էր, իսկ որոշումը՝ անհամաչափ:

Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված «Չափահաս անգործունակ անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ սկզբունքների մասին» թիվ Rec (99)4 հանձնարարությամբ սահմանվում են նաեւ համապատասխան դրույթներ, որոնք վերաբերում են չափահաս անգործունակ անձանց ներկայացնելուն եւ նրանց տրամադրվող աջակցությանը, ինչպես նաեւ այդպիսի աջակցության նկատմամբ հսկողությանն ու սահմանափակումներին: Առաջարկության մեջ մասնավորապես նշվում է, որ պետք է քայլեր ձեռնարկվեն՝ անգործունակ ճանաչված չափահաս անձանց ներկայացնելու եւ աջակցելու համար համապատասխան որակավորում ունեցող՝ բավարար թվով անձինք ապահովելու համար: Պետք է հաշվի առնել անգործունակ չափահաս անձի անունից գործելու կամ որոշումներ կայացնելու հետ կապված՝ օրենքի ուժով, առանց դատական կամ վարչական մարմնի միջամտության, ցանկացած անձի վերապահված որեւէ լիազորության սահմանափակում եւ դրա իրականացման նկատմամբ հսկողության իրականացում ապահովելու անհրաժեշտությունը: Բացի այդ, Հանձնարարության մեջ նաեւ նշվում է, որ ազգային օրենսդրությամբ պետք է որոշվի, թե որ դատական ակտերն են կրում այնպիսի խիստ անձնական բնույթ, որ չեն կարող կատարվել ներկայացուցչի կողմից⁸⁰:

Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալության «Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց եւ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործունակություն» փաստաթղթի ուսումնասիրությունը

⁸⁰ Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված «Չափահաս անգործունակ անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ սկզբունքների մասին» թիվ Rec (99)4 առաջարկություն, Սկզբունքներ 17-19, հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e303c.

մատնանշում է այս հարցի հետ կապված՝ ավելի շատ կոնկրետ երկրին բնորոշ փորձ⁸¹:

Ներպետական մակարդակի հարցերը սերտորեն կապված են խնամակալի եւ անգործունակ ճանաչված անձի շահերի բախման խնդրի հետ, որի մասին զեկուցվել է հարցազրույցների եւ փորձագիտական քննարկումների ժամանակ: Բացի այդ, ինչպես նշվել է, խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովները գործում են անվճար հիմունքներով [*pro bono*] եւ չունեն բավարար հնարավորություններ՝ շահերի բախման ռիսկերը պատշաճ կերպով ուսումնասիրելու համար: Ավելին, խնամակալության նկատմամբ իրականացվող վերահսկողությունն ու մշտադիտարկումը նույնպես արդյունավետ չեն: Դա կարող է կապված լինել ուղղորդման եւ կարողությունների զարգացման մասով միջոցառումների բացակայության հետ: Խնդիրը թեեւ խորն արմատավորված է թվում, այն կապված չէ օրենսդրական թերությունների հետ: Խնդիրն ավելի շատ կապված է մարդկային եւ այլ ռեսուրսների բացակայության հետ:

Չաշվի առնելով վերոնշյալ բացահայտումները եւ «Նիկոլյանն ընդդեմ Չայաստանի» գործով վճռի կատարման նպատակով առաջարկվում է Վարչական դատավարության օրենսգրքում կատարել լրացումներ եւ անգործունակ ճանաչված անձի համար նախատեսել խնամակալության եւ հոգաբարձության մարմնի խնամակալ նշանակելու մասին որոշումը բողոքարկելու իրավունք՝ ապահովելով նրա՝ որպես գործին մասնակցող անձի իրավունքները: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անձի գործունակության հետ կապված հնարավոր առողջական խնդիրները եւ ինքնուրույն որոշումներ կայացնելու դժվարությունը, առաջարկվում է անվճար իրավաբանական օգնության իրավունքը տրամադրել վարչական վարույթի շրջանակներում:

Առաջարկվում է նաեւ սահմանափակել անգործունակ ճանաչված անձի գույքի նկատմամբ խնամակալների լիազորությունները, եւ նախատեսել իրավասու մարմինների կողմից տրված նախնական հաստատման պահանջ՝ կախված գույքի ծավալից (խնամակալության եւ հոգաբարձության մարմին

⁸¹ Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալություն, «Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց եւ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործունակություն, 33-37-րդ էջեր, հասանելի են հետեւյալ հղմամբ՝ <https://fra.europa.eu/en/publication/2013/legal-capacity-persons-intellectual-disabilities-and-persons-mental-health>.

կամ դատարան):

Գործնականում օրենսդրական դրույթների՝ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին համապատասխան իրականացումն ապահովելու նպատակով առաջարկվում է՝

- ▶ Հաշվի առնելով գործնական բնույթ ունեցող խնդիրները՝ խնամակալի եւ անգործունակ ճանաչված անձի շահերի հնարավոր բախումը բացառելու եւ խնամակալության եւ հոգաբարձության մարմնի կողմից օրենքով նախատեսված հսկողության/մշտադիտարկման գործառույթն արդյունավետ իրականացնելու նպատակով դիտարկել խնամակալության հարցի պարբերական վերանայման ինստիտուտի ներդրման, ինչպես նաեւ այդ մարմնի զարգացման հնարավորության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրման եւ հնարավորությունների ապահովման հարցը: Առաջարկվում է նաեւ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի հրամանում կատարել լրացումներ, ինչպես քննարկվել է սույն գլխում՝ ապահովելով շահերի բախումը բացառելու եւ խնամակալության ու հոգաբարձության նկատմամբ վերահսկողության ու մշտադիտարկման վերաբերյալ ուղեցույցներ: